



ԿԵՆՑԱՂԱՎՈՅՍ

«Ա» «Բ» «Գ»



ԿԵՆՅԱՂԱԼՈՅՍ

«Ա», «Բ» եւ «Գ»

ՓՈՒՆԶ՝ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՒ

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ

ՍԺԹ

- 2019 -

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian

sivacian@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին ղրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս
 նաեւ երախտագիտութեան զգացումները
 կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան
 ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
 եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
 մի քանի բարեկամներու:

Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ
 առողջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ՝ նաեւ բոլոր անոնց,
 որոնք գիրքիս մէջ գործածուած պատկերները
 քաշած, հայթայթած եւ հրապարակած են:

Աղօթարար եմ,

որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ	
3-	Շտրհակալություն
4-	Բովանդակություն
7-	Կենսագրական
8-	Յիշատակ
9-	Ձօն
11-	Նախաբան
16-	- Յառաջաբան
21-	Կենցաղալոյս «Ա»
23-	- Սէրն Իմ
24-	- Աղէտը
27-	- Եկեղեցիս Հայկական
30-	- Յո՛ւ Երթանք
31-	- Հշմարիտ Կղերը
32-	- Գրաբար Լեզուն
33-	- Ո՛վ է Աստուած
34-	- Կրօնքը
36-	- Աստուածպաշտություն
37-	- Աստուածայայտնություն
40-	- Երրորդություն
41-	- Ի՞նչ է Աղօթքը
42-	- Ի՞նչ է Մեղքը
44-	- Հակասադիրը
46-	- Դժոխքը
48-	- Ո՛վ է Սատանան
49-	- Դրախտը
50-	- Մահը
52-	- Ապաշխարություն
54-	- Ժամանակը
56-	- Գիտություն
57-	- Իմաստություն
58-	- Սուրբ Հոգին
59-	- Մարդը
60-	- «Ես»ը
62-	- Գէրին
64-	- Խաւարը
66-	- Ո՛վ

- 67- - Կեանքը
- 68- - Ազատ Կամք
- 69- - Ձայնը
- 70- - Հունձքը
- 72- - Պատերազմը
- 73- - Կենցաղը
- 74- - Ի՞նչ է Սերը
- 75- - Զոհողություն
- 76- - Ծառայություն
- 78- - Ճանապարհը Հաւատքի
- 79- - Յոյսը
- 80- - Լոյսը
- 82- - Երանություն
- 84- - Ի՞նչ է Փրկությունը
- 85- - Վերստին Ծնունդ
- 86- - Հշմարիտ Ազատությունը
- 88- - Յարություն
- 90- - Խաչին Համբան
- 91- - Հաւատարմություն
- 92- - Գեղեցկություն
- 94- - Գիտակցություն
- 96- - Անկեղծ Ընկերը
- 97- - Կեղծաւորություն
- 98- - Ինչո՞ւ
- 101- Կենցաղալոյս «Բ»
- 103- - Ծնողքիս
- 104- - Արտաճիկիս
- 105- - Առաւօտ Լուսոյ
- 106- - Կաթիլ մը Արցունք
- 107- - Հիւանդը
- 109- - Երազը
- 111- - Յուշեր Դրախտի
- 113- - Առ Ոտս Վարդապետին
- 115- - Նուիրեալը
- 116- - Վերադարձը
- 118- - Տեսիլքը
- 119- - Կեանքը եւ մահը
- 120- - Մայր մը (Ա) եւ «Բ»


- 122- - «Սուրբ Սիրադ»
- 123- - Մահը ու Վախը
- 124- - Տիեզերական Օրենքները
- 125- - Մոմ մը
- 126- - Խոկումը
- 127- - Բեւեռները
- 128- - Զարթոնքը
- 129- - Աստիճանաւոր
- 130- - Կանթեղը
- 131- - Միտքը
- 132- - Երկու անիւները
- 133- - Վարդապետը
- 134- - Մաղթանքն Իմ
- 135- - Հաւատքը
- 136- - Ենթական
- 137- - Յարաբերութիւն
- 138- - Ի Խորոյ Սրտի Խօսք Ընդ Աստուծոյ
- 141- Կենցաղաւոյս «Գ»
- 143- - Սէր Առ Աստուած - Եունուս Էմբէ
- 144- - Հրաժէշտը - Թակոր
- 145- - Միայն մէկ վայրկեան - Բենիամին Մէյս
- 146- - Մայրս - Ղազար Պօղոսեան
- 149- - Մահուան Կարօտը - Սօլօ Նիկոսեան
- 150- - Եթէ - Բ. Քիլիլինսկ (Թարգմ. Մ. Իշխան)
- 151- - Ամմար սէր - Կոմիտաս
- 152- - Իբր Զարդ - Կոմիտաս
- 153- - Աստուած Իմ - Կոմիտաս
- 154- - Կոյրը - Կոմիտաս
- 155- - Աղբիւս - Կոմիտաս
- 156- - Քո Երազում - Կոմիտաս
- 156- - Հանապարհ - Կոմիտաս
- 157- - Փշուր մը - Կոմիտաս
- 157- - Հով - Սէր - Կոմիտաս
- 158- Հոսկ Բանք

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղւոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**ին ալ դասադիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրելու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն, **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերինսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մըն ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



**ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻՐ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ**



«Դուք աղջիկ եղաք, ուրիշ զեր շահագները իբր աղբորդ նեճեր
դուրս արձակուեճան:

Աղջիկս աղբորդ անշուքի ճամբորդս իր թիրախը ԿԵ ՏԵՍՆԷ ԵՒ ԱՂԵՂԸ
ՁՈՐԱԿՈՐ ԿԵՐՊՈՒԿ ԿԵ ԴՈՐԷ, ՈՐՊԷՍԺԻ ԻՐ ՆԵՏԸ ԱՐԱԳ ԵՒ ՀԵՄՈՒՄ
ԵՐԹԱՅ:

Աղջիկս աղբոր ՁԵՄՔԻՆ՝ զեր ԴՈՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄԸ ԵՂԱՒ
ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ ԱՂՅՈՐ ՆԵՏԸ ԿԵ ՍԻՐԷ, ՆՈՅՆՔԸՆ ԱՂ ՀԱՍՏԱՏ ԱՂԵՂԸ:»

(յարաստուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գրքէն)

ԱՅՏԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արեւը կը ծագի կը ծնի, եւ մայրամուտին կը մեռնի: Աս կը թուի բացարձակ իրողութիւն մը ըլլալ քանի որ Համայն մարդկութիւնը ամէն օր ականատես կ'ըլլայ թէ արեւածագին եւ թէ արեւամուտին: Բայց անոնք որոնք անջրպետ գացին, տեսան որ իսկական ճշմարտութիւնը ան է, որ արեւը ոչ կը ծագի եւ ոչ ալ մայրը կը մանէ, այլ իր ըյսը անդադար կը ափուէ ամենուրեք:

Մարդ արարած կը ծնի եւ կ'ապրի կ'ըսենք կեանք ունի, կը մեռնի կ'ըսենք կեանքը աւանդեց: Մեր մարդկային տեսանկիւնէն կը թուի բացարձակ իրողութիւն մը ըլլալ քանի որ կը տեսնենք մեռեալի անշարժ մարմինը: Ուրեմն կը հետեւցնենք թէ Կեանքը եւ մահը իրարու հակադիր են: Մահը ծնունդին հակադիրն է, այո՛, բայց երբեք Կեանքին:

Քրիստոս ըսաւ «Ես եմ Կեանքը եւ Ճշմարտութիւնը»: Քանի որ միակ ճշմարտութիւնը Աստուած է, ուրեմն Կեանքն ալ Աստուծով է եւ Աստուծոյ Հետ է եւ Հետեւաբար յախտեանական է ու անկարելի է որ մեռնի: Եթէ կը Հաւատանք Քրիստոսի խօսքին, ուրեմն մարդիկ կեանք չունին այլ Կեանք են, եւ չեն մեռնիր:

10 Նոյեմբեր **1955**ին, Կեանքը յարմար տեսաւ մարմնանալ մանուկի մը ծնունդով, որը կոչուեցաւ Ստա Էօզզօրլուօղլու: Ինք ծնաւ Ֆիտան եւ Վարդան ծնողաց: Իր միջոցաւ, Կեանքը ուրախութիւն եւ ինդութիւն սփռեց բոլորին որ ճանչցան Ստան. նախ իր ծնողքին, յետոյ իր եղբօր Արմանին, որուն ինք շատ մօտ էր եւ շատ կը սիրէր. նաեւ անոր ընտանիքին՝ տիկնոջ Էլէնայի եւ զաւակներուն՝ Մատթէոսի եւ Նատեայի ու իր բոլոր ազգականներուն: Կեանքը որոշեց լուսաւորել իմ'եութիւնս երբ մենք ամուսնացանք **21** Փետրուար **1987**ին:

Ստայի իմաստալից խօսքերով, տեսակէտներով, գաղափարներով եւ նամանաւանդ վարակիչ ինդուածքով Կեանքը անգամ մը եւս երջանկութիւն եւ իմաստութիւն բերաւ ինձի, ազգականներուս նաեւ մեր բոլոր ընկերներուն:

Նոյն Կեանքը իր բացարձակ իմաստութեամբ եւ Աստուծոյ կամքով յարմար տեսաւ թողուլ Ստային մարմինը եւ վերադարձաւ իր աղբիւրին՝ Աստուծոյ, պատճառ ունենալով մէկ տարուայ քաղցկեղի հիւանդութիւնը:

Հայաստանյայց Եկեղեցին գիտակցաբար ամէն յուրարկաւորութեան կ'երգէ ուրախութեան երգ: Մենք ալ ուրախութեամբ երգենք «Ի Վերին Երուսաղէմ»ը, Ստային միջոցաւ Կեանքին աշխարհ բերած երջանկութիւնը, ուրախութիւնը եւ իմաստութիւնը տօնելու Համար:



1955-2010



**Սոյն աշխատութիւնը կը շօնեմ
վարձատրուի Կողմնորոշման՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-ի
անթառնա ՅԻՇԱՏԱԿԻ:**



ԽՕՍՔ ՀՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԵԱՆ

Իմ խորին շնորհակալությունները
կը յայտնեմ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան Գանա-
տական Թեմի Առաջնորդ Գերշ.
Տէր Մեղրիկ Եպիսկոպոս Բարեք-
եանի, «Կենցաղալոյս (Վ)»-ի ան-
տիպ օրինակը կարդալու բարե-
հաճութեան եւ կամեցողութեան,
նաեւ որպէս նախաբան, իր ղրկած
գրութեան Համար:

Վ. Ս.



ՆԱԽԱԲԱՆ

Կոստանդնուպոլսոյ արուարծաններէն Գատը գիւղի մէջ ծնած, տեղւոյն Արամեան-Ունճեան Վարժարանը աւարտած, St. Joseph ֆրանսական վարժարանէն շրջանաւարտ, Թորոնթոյի համալսարանէն վկայուած, որպէս Պսակաւոր Գիտութեանց, ապա՝ ներքին հիւանդութեանց եւ սրտաբանութեանց մէջ մասնագիտացած Բժիշկ Վահէ Սվաճեան, իր տարիներու խոյուններուն եւ հոգեւոր ծառայութեանց որպէս անդրադարձ, երկրորդ հրատարակութեամբ մը ընթերցողներուն կը ներկայանայ իր բանաստեղծական այս գրքոյկով:

Բժիշկ Վահէ Սվաճեանը բժշկական իր մասնագիտութեան կողքին Պոլսական աւանդութիւններով եւ եկեղեցական կեանքով դաստիարակուած, երկար տարիներ ծառայած է Աստուծոյ Սուրբ Խորանին, որպէս դպիր եւ սարկաւազ:

Մարդիկ կան այս աշխարհի վրայ, որոնք իրենց աշխատանքին, գործին եւ առաքելութեան ընդմէջէն ճանապարհի մը հետեւորդ կը դառնան:

Մարդիկ կան, որոնք իրենց առօրեայ ապրելակերպի ոճով իրենց կեանքը կը վերածեն ոճակերպ կեանքի մը, որով իրենց մասնագիտութեամբ եւ գործին հանդէպ ունեցած բժախնդրութեամբ կը դրսեւորեն իրենց մտածումներն ու զգացումները:

Մարդիկ կան, որոնք իրենց գործին, արհեստին աստուածներն են. առանց իրենց, ամէն ինչ մերժուած է:

Մարդիկ կան, որոնք իրենց ուսման, իրենց ստացած վկայականներուն, տիտղոսներուն եւ մարդոց կողմէ առժեւորման եւ գնահատանքի զոհերն են:

Մարդիկ կան, որոնք չեն տեսներ գերագոյն ճշմարտութիւնը կեանքին, որովհետեւ իրենց համար ճշմարտութիւնը միայն իրենք են: Եւս առաւել, բժշկական կեանքի մէջ ու մանաւանդ մերօրեայ հայ բժիշկներու կեանքին մէջ:

Բացառութիւնները միշտ յարգելի են, բայց, Աստուածաշնչական ճշմարտութիւնը գուցէ որպէս յաւիտենական ճշմարտութիւն, մեզի կը ներկայացուի երբ կ'ըսուի՝ «բժիշկ», բժշկեա՛լ զանձն քո, այսինքն՝ բժիշկ, դուն քեզ բժշկէ:

Խօսքը մարմնաւոր բժշկութեան չի վերաբերիր, այլ՝ հոգեւոր. ա՛յն բժշկութեան, որով Աստուած իր տուած շնորհքներով, տաղանդներով, իմացականութեամբ եւ գիտութեամբ իր փառքը ցոյց կու տայ եւ հրաշագործութիւնը կը շողացնէ մարդկային մեր կեանքին մէջ:

Յաճախ բժիշկներ, ինչո՛ւ չէ նաեւ գիտնականներ, կը մոռնան որ Աստուած գիտութեա՛ն ալ Աստուածն է, այդ փոքրիկ ուղեղը Աստուծոյ արարչագործութեան գլուխ գործոցն է, որով մեզ կը զատէ անասուններէն, բուսականութենէն եւ քարացած կոյտերէն:

Բժիշկ Վահէ Սվաճեան այս բոլորին բարդոյթէն չտառապող այն քիչ թիւով բժիշկներէն է, որոնք Աստուծոյ անունով, անոր շնորհներուն ապաւինելով եւ գերագոյն աստիճանի վստահութեամբ բժշկական իրենց ասպարէզը կ'առաջնորդեն որպէս փառաբանութիւն Աստուծոյ Սուրբ անուան:

Բժիշկ Վահէ Սվաճեան խորունկ մտածելակերպի ենթահող ունի եւ որպէս քրիստոնեայ ու Աստուծոյ Սուրբ Խորանին ծառայող սպասաւոր, փորձած է իր կեանքին մէջ հոգիներու Աստուածը ներկայացնել նաեւ որպէս գիտութեա՛ն Աստուած, եւ իր տարիներու ուսումնասիրութեան որպէս արդիւնք, փորձած է

Եւ յաջողած է մարդկային գիտութիւնն ու հոգեւոր արժէքները ներկայացնել որպէս աստուածային հրաշագործութիւն, հաւատալով, որ առանց Աստուծոյ կամքին ոչ մէկ տերեւ կը շարժի այս աշխարհի վրայ:

Բաց միտք ունի: Ծանօթ է օտար, ո՛չ քրիստոնեայ, այլ՝ հեթանոս կրօնքներու, բայց այդ բոլորին ծանօթութիւնը իր մէջ առաւել եւս աւելցուցած է հաւատքը հանդէպ Աստուծոյ եւ անոր գերագոյն սիրոյն:

Արդարեւ, իրեն համար սերը պէտք է յարատեւ աճի, սիրոյ զօրութեան նպատակը աստուածայայտնութիւնն է, հետեւաբար, սիրելը գերագոյն ստեղծագործութիւնն է:

Վահէ Սվաճեան իր այս բանաստեղծութեան նուիրուած հատորով յաւակնութիւն չունի բանաստեղծ դառնալու, բայց, այս հրատարակութեան պատճառը նախ՝ իր մէջի լաւան դուրս բերել է առանց այրելու շրջապատը, առանց փճացնելու կեանքի դալարութիւնը, լաւան դուրս բերել, որպէս սրտէն բոխող եւ հոգիով գրուած գեղեցիկ երաժշտութիւն:

Այդ լաւային մէջ հարստութիւն կայ, այդ հարստութեան հասնելու միակ միջոցը ընթերցումն է այս հատորին, բայց ոչ որպէս սոսկական ընթերցանութիւն, այլ՝ մտքով, հոգիով, զգացումով եւ ողջ էութեամբ ընթերցանութիւն, որովհետեւ, որպէս ընթերցող պէտք է մտածես Սվաճեանի իւրաքանչիւր նախադասութեան մասին:

Ի վերջոյ, Վահէ Սվաճեան Գերագոյն Բարիին փնտռտուքը կը կատարէ այս հատորով, ա՛յն Բարին, որ իր ձեռքերուն մէջ է, իր քով, իր հետ, իր սրտին մէջ: Ա՛յն Բարին, որ ուրիշներու ալ սրտին մէջ տեսած է, անոր համար ալ կ'ուզէ տեսնել, վայելել եւ ըմբռնել:

Նեղ ամեն ինչ որ Աստուծոյ ձեռքին գործն է, ուրեմն՝ Բարի է:

Այս առիթով, բարձրօրէն գնահատելով հանդերձ, կը շնորհաւորեն Բժիշկ Սվաճեանը, որովհետեւ իր այս հատորի հրատարակութեամբ հսկայ այս մարդու ետին բազմաթիւ սրտերու կռիւներուն եւ դիմադրութեան ականատես եղող Բժիշկի ետին կայ խորունկ մտածողութեան մը արգասիքը եղող փափուկ սիրտ:

Թող այս հատորը ըլլայ աղօթարարութեան ներշնչման աղբիւր, ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեանն, յաւիտեանէ յաւիտեան. ամեն:

Աղօթարար՝
ՄԵՂՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա

Միացեալ Նահանգներու նախագահներէն Աբրահամ Վինգոլնին կառավարական պաշտօնի մը համար թեկնածու մը կը ներկայացնեն: Նախագահը թեկնածուին հետ կարճ տեսակցութենէ մը յետոյ, իր խորհրդատուներուն կը տեղեկացնէ, թէ թեկնածուն այդ պաշտօնին համար յարմար չի նկատեր: Խորհրդատուները կ'առարկեն ըսելով, թէ այդ թեկնածուն յանձնարարութիւններ ունեցող, ամենալաւ պատրաստուած, պաշտօնին յարմար անձն է: Երբ անոնք իր մերժումին պատճառը կը հարցնեն, նախագահին պատասխանը պարզապէս «Հատ տգեղ է» կ'ըլլայ: Խորհրդատուներէն մին կը յիշեցնէ, թէ եթէ Աստուած մարդը տգեղ ստեղծած է, ասիկա անձին յանցանքը չէ: Նախագահին կտրով պատասխանը կ'ըլլայ. «Ամէն անձ, որ քառասունչինգ տարեկանը անցած է, պատասխանատու է իր դէմքին երեւոյթէն»:

Վստահ եմ բոլորս ալ կը ճանչնանք անձեր, որոնք իրենց երիտասարդութեան տգեղ եղած են, բայց տարիքի յառաջացումով իրենց դիմագիծն ալ փոխուած է: Հետզհետէ աւելի գեղեցկացած են: Ուրիշներ ալ, որոնք պզտիկութեան պուպրիկի նման գեղեցիկ երես ունեցած են, տարիներու ընթացքին, օրրատօրէ տգեղցած են: Երբեմն անձ մը կը տեսնենք, որուն դէմքին վրայ անմիջապէս փայլ մը կը նշմարենք ու «Երեսը շնորհք կայ» կ'ըսենք:

Անգլերէն ասացուածքը կ'ըսէ. «Beauty is in the eye of the beholder» (Գեղեցկութիւնը կախեալ է զայն դիտողէն): Գեղեցկութիւնը դէմքի գիծերէն, դիմագիծին

Համեմատություններէն եւ մորթին ողորկութենէն կախեալ չէ, քանզի կան ծերունիներ՝ կին թէ այր, որոնց մորթը խորշումած է Հազար ու մէկ գիծերով եւ փոսերով, բայց իրենց երեսէն գեղեցկութիւնը կը ցայտայ: Այդ գեղեցկութիւնը որ կը տեսնենք անձին ունեցած զօրութեան ճառագայթումն է, անոր փառապսալն է: Այդ փառապըսակի ճառագայթներուն զօրութենէն եւ թրթռացումի յաճախականութենէն անգիտակցաբար կ'ազդուինք: Եթէ անձին արձակած զօրութիւնը կը Համապատասխանէ մեր զօրութեան, զինք կը նկատենք գեղեցիկ, ապա թէ ոչ սգեղ: Այդ զօրութեան եւ թրթռացումի մակարդակը կը Համապատասխանէ անձին Ս. Հոգիէն ստացած զօրութեան մակարդակին, որ կախեալ է անձին կենցաղէն:

«Ղոյս 'ի Լուսոյ» խորագրով Հրատարակուած, մօտաւորապէս վեցհարիւր էջ գրքիս բովանդակութեան հիմնական գաղափարը Հակիրճ կերպով ներկայացնելու նպատակով ալ այս «Կենցաղալոյս»ը ոտանաւորներու երկը գրեցի: «Կենցաղալոյս»ը ամենեւին չի փոխարիներ «Ղոյս 'ի Լուսոյ»ն, ընդհակառակը զայն կ'ամբողջացնէ:

Ընթերցողը պիտի նշմարէ, թէ ոտանաւորներուն մօտաւորապէս մեծամասնութեան տուած Հայեցողութիւնը, ընդհանուր առմամբ, նոյնն է, որովհետեւ Ճշմարտութիւնն ալ շատ պարզ է: Մարդիկ կը կարծեն թէ կեանքը, կրօնքը, փրկութիւնը եւայլն բարդ Հարցեր են: Ընդհակառակը ամէն ինչ շատ պարզ է, բայց ըսել չէ թէ շատ դիւրին է:

Մարդ արարած կը նմանի ձկնարանի (aquarium) ապակեայ աւազանի մէջ կըր կըր լողացող ձուկի մը, անգիտակից Հսկայ ուկիանոսի մը գոյութենէն: Ենթադրենք, թէ ձուկը ուկիանոսի գոյութեան մասին տեղեակ ըլլայ եւ նոյնիսկ ամէն օր «ուկիանոս» երազէ: Երբ ձուկը ուկիանոս արձակելու Համար ձկնարանէն դուրս Հանեն, խեղճ ձուկը կը դողդղայ, կը պայքարի ու

երբ ետ ձկնարանի մէջ իյնայ, կ'ուրախանայ: Նոյնն է նաեւ մարդու վիճակը: Ամէն օր եկեղեցի կ'երթայ: Փրկութեան Համար կ'աղօթէ բայց երբ առիթը ներկայանայ, այս պատրանքային աշխարհի «սա» «դա» «նա»ներուն Հետ իր ունեցած կապը թող չտալու Համար կը պայքարի ի գին ամէն բանի: Ուրեմն մարդ իր մտային անդորրութեանը Համար կրօնքը կը յարմարցնէ իր բնոյթին, քան թէ իր բնոյթը փոխէ յարմարելու Քրիստոսի: Ինքզինք խաբելով կ'ապրի պատրանքային կեանք մը, որուն վախճանը կը սպասէ վախով: Որպեսզի այդ վախն ալ չխանգարէ իր անդորրութիւնը կը շինէ պատրանքային դրախտի յոյս մը, որ պիտի իրականանայ մահէն յետոյ: Յատկանշական է մահէ յետոյ ըլլալը, քանի որ պատրանքին վերջ տալու կացութիւնը անձին վրայ որեւէ պատասխանատուութիւն չի դնէր, քանզի պատրանքն ալ մահով ինքնին վերջացած կ'ըլլայ: Դժբախտաբար մարդն ալ յետ մահու այլեւս որեւէ դրախտի գիտակցութիւնը չի կրնար ունենալ, քանզի դրախտը աշխարհի վրայ է ու մահէ ետք մարդ այլեւս Հոս չէ: Ըստ Ծննդոց գիրքին, Ադամ եւ Եւայի օրերուն դրախտը աշխարհի վրայ էր, չեմ կարծեր փոխուած ըլլայ: Հշմարիտ անդորրութիւնը Քրիստոսի Հետ ըլլալն է: Մարդ արարած պարտ է իր կենցաղով Չայն յայտնաբերել: «Կենցաղալոյս»ի նպատակն ալ պարզապէս այս տեսակետը արտայայտել է:



Բ

Ես ոչ բանաստեղծ եմ ոչ ալ գրող: Իմ հայեցի գաստիարակութիւնը միայն ու միայն նախակրթարանի մակարդակ ունի, որով գործածած լեզուս ալ շատ պարզ է: Եթէ լեզուական կամ քերականական սխալներ կան կ'ապաւինիմ ընթերցողի ներողամտութեան:

Անարժանաբար ոտանաւոր գրելու յանդգնութիւնը ունեցայ: Աս հատորը գրական երկ մը չէ, այլ հոգեւոր ճանապարհի մը ուղեցոյցն է: Օր մը, երբ քիչ մը տխրած էի, սրտէս բխածը համակարգիչով գրի առի եւ անգլերէնի ալ թարգմանեցի: Ան ինքնաբերաբար ոտանաւորի ձեւ առաւ, բայց ոչ յանգ ունէր ոչ ալ չափ: Ես զայն որպէս ոտանաւոր չհանեցայ: Բայց մի քանի ընկերներ շատ հանեցան, ինչ որ ինծի մեծ զարմանք պատճառեց: Այդ ոտանաւորը «Սէրն Իմ»ն է «Վենցադալոյս»ին առաջին ոտանաւորը: Աս ինծի ուրիշ ոտանաւորներ ալ գրելու քաջութիւնը տուաւ: Մի քանին, արդէն իսկ, «Լոյս 'ի Լուոյ» գիրքին վերջին էջերուն մէջ հրատարակուեցաւ: Ոտանաւորի մը յանգ եւ չափ ունենալը ինծի համար կարեւոր է, որով ոտանաւորներուս վերջինները, կարողութեանս սահմաններուն մէջ, ջանացի այդ հասկացողութեան համապատասխան յօրինել: Ինչպէս վերեւ նշեցի, իմ նպատակը գրութեան բովանդակութիւնն է եւ ոչ թէ ձեւն ու ոճը: Հաճեցէք նման հայեացքով ընդունիլ այս հրատարակութիւնը:

Վահէ Սվաճեան



Գ

Այս հատորը «Կենցաղալոյս»-ին երկրորդ հրատարակութիւնն է: Այս գրքոյկը բաժնուած է երեք մասերու: Առաջին բաժինը կը պարունակէ այն բոլոր ոտանաւորները, որոնք նախորդ հրատարակութեան (2014) մէջ ներկայացուած էին: Երկրորդ բաժինը կը պարունակէ այն ոտանաւորները, որոնց մէկ մասը զանազան գիրքերու մէջ տեղադրուած էին, բայց ոչ «Կենցաղալոյս»-ի առաջին հատորին մէջ, ինչպէս նաեւ որոշ ոտանաւորներ, որ առաջուց բնաւ չէին հրատարակուած: Իսկ այս հատորին երրորդ բաժինը կը պարունակէ զանազան հեղինակներու յօրինած ոտանաւորները, որոնց մէկ մասը ներկայացուած են իբրեւ թարգմանութիւն: Կայ նաեւ ոտանաւոր մը որուն բնագիրը հայերէնով է: Ասոնք ալ առաջուց զանազան գիրքերու մէջ հրատարակուած էին:





ՄԷՐՆ ԻՄ

Աչքս բացի՝

Մայրս տեսայ ու սիրեցի.

Գիտցայ, թե սերով ծնած էի:

Հայրս գրկեց՝

Տաքով մարմնին մօտ ու սիրեցի.

Գիտցայ, թե սերով ծնած էի:

Քաղել սկսայ՝

Հորիզոնս հեռացաւ ու սիրեցի.

Գիտցայ, թե սերով ծնած էի:

Հասկնալ սկսայ՝

Տեսայ ամէն ինչ ու սիրեցի.

Գիտցայ, թե սերով ծնած էի:

Բոցը տեսայ՝

Ան ալ շատ սիրեցի.

Քանի, որ սերով ծնած էի:

Բռնել ուզեցի՝

Մատս պրեց.

Ատելը սորլեցայ:

Դպրոց գացի՝

Ուսուցիչներէս ոմանք սիրեցի,

Ոմանք ատեցի:

Սկսայ դատել՝

Թե արժանի է սիրել,

Կամ արժանի է ատել:

Տեսայ մի հրեշտակի երես՝

Սիրահարուեցայ.

Յիշեցի, թե սերով ծնած էի:

Երբ սիրով էի՝

Ժամանակն ալ սիրեցի.

Իսկ յետոյ զայն ատեցի:

Քանզի ան խլեց ինձմէ՝

Հայր, մայր ու սիրահար՝

Ան բոլորը զոր սիրեցի:

Մովթ ու տխուր օրերուս

Իմացայ մի լուռ ձայն՝

Սրտիս խորքէն մրմնջող:

Յոյսի Լոյս մը ծագեցաւ

Երբ իմացայ որ կ'ըսէր.

«Սիրէ ու սիրէ եւ դարձեալ սիրէ»:

«Սիրէ, առանց Հօր ու մօր,

Սիրէ, առանց սիրահարի,

Սիրէ անխտիր բոլորին»:

Պարտիմ կերտել նման սեր,

Քանի եկայ սերով,

Նաեւ պէտք է երթամ սերով:



ԱՂԷՏԸ

Ազգայնամուլ բռնուցք մը ուժգին,
Իջաւ զօրաւոր գլխուն մեր ազգին.
Հայ ազգը լացաւ իր ճակատագրին,
Երբ տեսաւ մահը մէկուկէս միլիոնին:

Թշնամին չինայեց մեծ ու սզտիկ,
Պարպեց երկիրը բնակչութենէ բնիկ.
Զարմացան երբ իմացան այլ մարդիկ
Անկարող օգնելու նոյնիսկ մի հատիկ:

Մնացողը տարածուեցաւ ի մէջ Սփիւռքի,
Մաս մըն ալ կրօնափոխ ըրին բռնի,
Որ կորսնցնէն իրենց ինքնութիւնը Հայի,
Վերջ տալով արեւմտեան Հայաստանի:

Երեսուն տարի յետոյ աղէտը կոչեցին
«Ցեղասպանութիւն»՝ դէմ մարդկային
Իրաւունքներուն եւ ընդհանուր օրէնքին,
Պատժելի դատարանով միջազգային:

Աղէտը կը շարունակուի տակաւին,
Մշակոյթը խառնուած է հետ այլ ազգին,
Դպրոցները պարպուած կը գոցուին,
Վերջի սերունդը հմուտ չէ իր լեզուին:

Իսկ արեւելահայերէնը փոխուած է արդէն
Բառամթերքի մեծ մասն է օտար լեզուներէն.
Ուղղագրութիւնը տարբեր է մեսրոպեանէն,
Կարծէք լեզուն մահուան կը դատապարտեն:

Կ'ըսուի թէ ամէն մէկ ուժգին հարուած
Իր մէջ կը պարունակէ դաս մը պահուած.
Ի՞նչ էր այս դասը հայ ազգին տրուած,
Տոյց տալ էր, թէ կեանքէն ի՞նչ է սորված:

Հետ աղէտի ականատես ենք շարունակ
Գործերու՝ բաժանման շուքին տակ.
Կուսակցութիւններ կը կուռն շարունակ,
Նոյնիսկ եկեղեցին է երկու գլխու տակ:

Հայ ազգը աղօթեց Անհունին անընդհատ
Որ ոնենայ իր ազատ երկիրը հաստատ.
Իսկ Աստուած իրեն շնորհեց երկու հատ,
Չեմ գիտեր ինչո՞ւ կ'ըլլայ մեծ արտագաղթ:

Ժամանակը արդէն եկած է արթնութեան,
Զարթոնք մը պէտք է հայ հանրութեան,
Իրարու հետ սերով համագործակցութեան,
Վերջ տալով բոլոր փուճ վիճաբանութեան:

Հպարտ ենք առաջին քրիստոնեայ ըլլալով
Միա կողմէն զբաղ ենք եկեղեցին քանդելով.
Պէտք չէ քրիստոնեայ ըլլալ միայն անունով,
Այլ զայն ցոյց տալ է երանելի Քրիստոսով:

Պահանջել ճանաչումը Ցեղասպանությունեան,
Ամէն Հայի պարտականությունն է անպայման
Սէր եւ գութ ցոյց տալ է դէմ թշնամութեան,
Որպէսզի Քրիստոս յայսնուի մէջ մեր էութեան:

Աստուած ու տիեզերք արդար են անկասկած,
Թշնամին պիտի տուժէ իր սխալին գործած.
Օգնէ՛ք որ ան անդրադառնայ շատ չուշացած,
Որպէսզի գալիք Հարուածն ալ ըլլայ մեղմացած:

Կարելորը այն է որ մենք մեր դասը սորվինք
Եւ եսասիրութեան թակարդէն փախչինք
Ու Աստուծային ձրի շնորհքին ապաւինինք
Որպէսզի ուր որ ալ ըլլանք՝ Հայ ապրինք:





ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

*Հայ եկեղեցին առաքելական՝
Հաւաքականութիւն մը անդուգական,
Ժամերգութիւնները անխափան,
Կենցաղն էն մարդկութեան:*

*Արարողութիւններն էն ծիսական,
Ալը խորհուրդներու բազմադարեան,
Որոնք ուղին էն Հոգեւոր ճամբորդութեան,
Արտայայտութիւն մը Աստուածպաշտութեան:*

*Երեկոյեան արեւամուտն է անպայման
Սկիզբը Հայոց եկեղեցական օրուան,
Որ կը վերջանայ Պատարագի աւարտման,
Ներկայացնելով կեանքը մարդկութեան:*

Առաջինն է «Ժամերգութիւնը Երեկոյեան»,
Որ կը ներկայացնէ անկումը մարդկութեան,
Անդրադարձ կորուստի մը՝ ողբերգական
Կորուստը այն Լոյսին Աստուածութեան:

Յաջորդն է «Ժամերգութիւնը Խաղաղական»,
Ան կոչ մըն է Համայն մարդկութեան,
Որ կերտէ կենցաղ մը խաղաղութեան
Եւ ճամբան բանայ ապաշխարութեան:

Կից «Ժամերգութիւնը Հանգստեան»,
Աղերսանք մըն է Աստուածութեան,
Որ գիշերը խաւարամտութեան
Չտառապեցնէ մարդկութեան:

Արեւածագէն առաջ առտուան,
«Գիշերային Ժամերգութիւնը» առաւօտեան,
Հրաւեր մըն է արթնութեան,
Որ վերջ տանք մեր Հոգեկան մահուան:

«Ժամերգութիւնը Առաւօտեան»,
Զարթուցեալին առիթը գոհաբանութեան
Եւ Աստուած փառաբանութեան,
Ուր կը ծագի յոյսը փրկութեան:

«Արեւագալի Ժամերգութիւնը» անխափան,
Ուր բարձր մակարդակ մը գիտակցութեան
Կը փառաբանէ Լոյսն Աստուածութեան,
Յանկալով այդ Լոյսի յայտնութեան:

«Ճաշու ժամերգութիւնը» երրորդութեան,
 Կը բաղկանայ երեք մասերէ աղերսական,
 Հարժեղով Ողորմութիւնը Աստուածութեան,
 Որ պարգեւէ փրկութիւնը մարդկութեան:

Պատարագն է գագաթը ծիսակատարութեան,
 Կը ներկայացնէ մարտ մը կենաց ու մահուան,
 Մղուած դէմ «Ես»ի բռնապետութեան
 Եւ յաղթանակն է Հրամայականը փրկութեան:

Երբ անձը կ'ըլլայ իր «Ես»ի դէմ յաղթական
 Ճամբան կը բանայ Աստուծոյ Հետ Հաղորդութեան,
 Կ'ունենայ մակարդակ մը գիտակցութեան
 Ու կ'ըլլայ միջոցը Աստուածայայտնութեան:

Մանակցութիւնը եկեղեցական արարողութեան
 Պարտ է մեզի սորվեցնէ ճանապարհը ճշմարտութեան
 Նաեւ ան մեր խոստումն է Աստուածութեան,
 Որ մեր աւօրեայ կեանքերն ալ ըլլան նման:





ՅՈՐ ԵՐԹԱՆՔ

Հայաստանեայց Եկեղեցին,
«Ծննդավայրը մեր Հոգիին».
Երկար դարերու ընթացքին,
Տիպը ընդդիմահար վաճանին:

Ան դիմադրած է ամեն աղետին,
Ըլլան ներքին կամ արտաքին.
Ու ծանր լուծին տակ օտարին,
Փարոսն էր յոյսի մեր ազգին:

Եղաւ պահպանիչը մշակոյթին
Եւ մեր մայրենի լեզուին.
Աղբիւրը յոյսի մեր ժողովուրդին,
Տարածուած մէջ սփիւռքին:

Ինքնապահպանման պայքարին
Ալ ծառայեց ան եւ աւելին,
Նպատակն էր տալ իր Հօտին,
Ան, որ չէր կրնար՝ այլ Եկեղեցին:

*

Առաքելութիւնը փոխուած է.
Մշակոյթը առաջնութեաց է.
Լեզուն ալ փոխուելու վրայ է.
Գրաբարը աշխարհաբար եղած է

Նպատակը կը խորհիմ թէ
Խորհուրդը Հասկնալի ընել է:
Ան, որ Հասկնալի է խորհուրդ չէ,
Աս ալ Եկեղեցին քանդել է:

Պարահանդէսը առաջնակարգ է
Իսկ Ժամերգութիւնը կրճատուած է
Ժամանակին յարմարած է,
Կ'ըսուի թէ Ժողովուրդին փափաքն է:

Պէտք չէ զարմանք պատճառէ
Թէ Հայ ազգը Հոգեւվարք է.
Հակառակ որ երկիրը անկախ է,
Ընդհանուր կացութիւնը ցաւալի է:

*

Չկործանենք մեր Եկեղեցին
Հետեւելով խաւարամիտին,
Ալ վերականգնենք զայն կրկին,
Որ Համար իր անցեալի փառքին:

Ան կեանքն է Քրիստոսին.
Ուղեցոյցը Հոգեւոր ճամբորդին,
Որ ինք կերտէ կենցաղը սուրբին
Եւ Աստուծոյ Հետ Հաղորդուի իր
Հոգին:



«ՃԱՆԱԶԻՐ ԲԵՉ ՈՐ ՀԱՍԿԱՆԱ ԹԷ ԻՆՉԻ ԵՍ» (ԿՈՄԻՏԱՍ)

ՃՀՄԱՐԻՏ ԿՂԵՐԸ

Պարզ մարդ մը աշխարհիկ,
Որ ունի կենցաղ մը բացառիկ.
Չի գործեր նման այլ մարդիկ,
Այլ է Աստուծոյ ձեռն մի գործիք:

Նուիրուած է ան Հոգիով սրտով
Իր կոչումին, ի յայտ բերելով
Վեհ անձ մը իր Աստուծով
Որ իր Հօտը տեսնէ Հիանալով:

Ծիսակատար պաշտօնեայ է,
Աղօթքի մէջ առաջնորդ է,
Իր կեանքի օրինակով ուսուցիչ է,
Նաեւ բոլորի ընկերն է:

Ան սիրոյ մարմնացումն է,
Եւ գութի արտայայտութիւնն է.
Հաւատքի փարոսն է,
Եւ յոյսի շտեմարանն է:

Հիւանդին անդորրութեան ակն է.
Անհաւատին Աստուածային լոյսն է.
Ընկճուածին Աստուածային յոյսն է,
Չայրացողին խաղաղութեան ակն է:

Ան Աստուծոյ օծեալը ըլլալով
Պէտք է ապրի նման Հայեացքով,
Եւ Հաղորդուի Քրիստոսով
Որ Ան յայսմուի իրմով:



ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒՆ

Աշխարհի երկու լեզուներէն մին
Տարբեր են ու չեն նմանիր ուրիշին.
Ճկուն՝ կազմութեամբ բառամթերքին
Եւ հաւատարիմ բառերու իմաստին:

Ան կատարեալ է ներկայութեամբ՝
Իր բառերու ստուգաբանութեամբ.
Նաեւ անոնց հղովաբանութեամբ,
Ինչու չէ, նաեւ ուղղագրութեամբ:

Քերականութիւնն է անսփոփոխ,
Բառերու հնչումն է վերացնող,
Երաժշտութեան մը նման հոսող,
Մտիկ ընողին հոգին բարձրացնող:

Կը յայտնէ տիեզերքի ճշմարտութիւնը,
Շատ հակիրճ եւ պարզ է գրութիւնը,
Ան կը յայտնաբերէ գեղեցկութիւնը,
Կարծէք կը ցոլացնէ Յայտնութիւնը:

Ս. Մեսրոպ գտաւ գիրերը լեզուին,
Եղաւ կատարեալ լեզու մը մարդկային,
Յենեղով իր տիեզերական կապին,
Յարմար է աղօթելու Կատարեալին:



Ո՞Վ Է ԱՍՏՈՒԱԾ

Պատճառը ստեղծագործության
Եւ Էութինը գիտակցության,
Ու այն զգացումը երանության,
Եւ աղբիւրը բոլոր գիտութեան:

Ամենակարող Իր զօրութեամբ,
Եւ ամենուրեք Իր գոյութեամբ,
Ամենաարդար Իր դատողութեամբ,
Ամենաուղիղ Իր զատողութեամբ:

Տիպն է սիրոյ արտայայտութեան,
Ակը բազմապատիկ ողորմութեան,
Եւ ծայրայեղ ներողամտութեան,
Ու միջոցը մարդու փրկութեան:

Ինչպէս ամէն մարդ իր էութեամբ,
Թափանցած է ծածկութեամբ,
Իր մարմնին մէջ ամբողջութեամբ,
Ապրեցնելով զայն իր գոյութեամբ,

Աստուած ալ Իր Էութեամբ,
Թափանցած է ծածկութեամբ,
Տիեզերքի մէջ ամբողջութեամբ,
Կեննք տալով Իր գոյութեամբ:

Անտարակոյս Աստուած մէկ է,
Ակը բոլորին՝ Հայր Աստուած է,
Իր զօրութիւնը՝ Սուրբ Հոգին է,
Արտայայտութիւնը՝ Քրիստոսն է:

Մարդ միշտ փնտռած է Աստուած,
Բոլոր սրբաւայրերու մէջ գոյացած,
Լման կեանքին ընթացքին եւ յոգնած,
Անպէտ, թէ Ան իր մէջ է մարմնացած:



ԿՐՕՆՔԸ

Երբ մարդ կորսնցուց իր կեանքը երանութեան,
 Հետեանք իր հոգեկան անկումին ողբերգական,
 Փնտուեց այդ բարձր մակարդակը գիտակցութեան,
 Բայց աւա՛ղ միայն շատ քիչ անձեր յաջողեցան:

Անոնք ունեցան փորձառութիւնը Յայտնութեան,
 Ուղեցին զայն բաժնել Համայն մարդկութեան,
 Պատմեցին իրենց զգացածը Հանրութեան,
 Ու գծեցին ուղեցոյցը կենցաղի մը յաջողութեան:

Անոնց բոլորին փորձառութիւններն էին նման,
 Բայց արտայայտութիւններն էին տարբերական:
 Անոնք ցոյց տուին ճանապարհը ճշմարտութեան,
 Բայց աշակերտները կազմեցին կրօնքներ զանազան:

Բոլոր կրօնքները իրարմէ կը տարբերին անպայման,
 Հարկ է ամէն կրօնք ցոյց տայ ճամբան փրկութեան:
 Բոլորն ալ կը պարունակեն կորիզը ճշմարտութեան,
 Հոգ չէ թէ ներկայացնեն երեսոյթ մը տարբերութեան:

Ուրեմն կրօնքը քարտէս մըն է մարդկութեան,
Որ ան կերտէ կենցաղ մը յարմար փրկութեան,
Եւ վերագտնէ յաւիտենական կեանքը երանութեան,
Իրականացնելով յայտնութիւնը Աստուածութեան:

Ամէն անձի Հոգին կը պատկանի Աստուածութեան,
Եւ Աստուած կը պարգեւէ այդ Հոգին մարդկութեան:
Ան կ'որոշէ կրօնքը ուր պետք է ծնի անձը՝ մի պայման,
Որ պարտ է ըլլայ անձի բնոյթին Համապատասխան:

Սխալ է եւ յոխորտալից, անձը մղել կրօնափոխութեան.
Ան փոխել է այդ նախնական որոշումը Աստուածութեան.
Ան Հնազանդիլ ու գլուխ ծռել է «Ես»ի բռնապետութեան.
Նպատակը լաւ, բայց ան արդիւնք է Հպարտութեան*:

Ամէն անձ պարտ է թափանցէ իր կրօնքի խորութեան,
Եւ Հաւատայ միայն մակերեսային Հասկացողութեան,
Իսկ անձնական ջանքերով պարտ է պատրաստէ ճամբան
Ան երանութեան, որ է միանալ Հետ Աստուածութեան:

* Նաեւ կարելի է ըսել «խաւարամտութեան»:





ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԻՒՆ

Պաշտամունքը ձեռակերպութիւն մը չէ.
Ան նաեւ ծիսակատարութեան մէջն ալ չէ.
Ան, որ ստիպողական է, պաշտամունք չէ,
Այլ ան ինքնաբոլիս հոգեվիճակ մըն է:

Քանի տիեզերքն է Աստուծոյ մարմինը,
Բոլորը սիրելն է ընտիր պաշտամունքը,
Անտարակոյժ՝ ներառեալ բնութիւնը,
Ինչպէս նաեւ համայն մարդկութիւնը:

Ան, խորհիլ է միայն բարի խորհուրդներ,
Եւ ան խօսիլ է միայն անմիաս խօսքեր,
Ու գործել է միայն օգտակար գործեր,
Ան սիրել է թէ՛ թշնամի եւ թէ՛ ընկեր:

Ան գութի ու ողորմութեան երեսոյթն է
Ու ծառայութեան իրականացումն է.
Բարեսիրութեան արտայայտութիւնն է,
Աստուծոյ շնորհակալութիւն յայտնել է:

Ան չէ՝ աջ ու ձախ «Օրհնեալ է Տէր» ըսել:
Իմաստը Աւետարանի մէջ պէտք է փնտռել,
Հետեւաբար կարգանք. «Որովհետեւ արարէք
Միում՝ յաղբայրս...փոքրկանց՝ ինձ արարէք».*

* «Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք»:
(Մատթէոս ԻԵ :40)



ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Աստուած է միակ Հշմարտութիւնը
Որ կը ներկայացնէ յաւիտեանը,
Անլսելի, անտեսանելի ու անյայտը,
Չեղած ժամանակը կամ միջոցը:

Որոշումը Աստուածութեան
Յայտնութիւնն է Հշմարտութեան
Միջոցաւ ստեղծագործութեան
Յառաջացմամբ բարեշրջման:

Զօրութիւնը եղաւ առաջին,
Բանն էր ան Աստուածային.
Եւ Բանն եղել մարմնային
Միջոցաւ Բանի թրթռացումին:

Գոյականին յաջորդեց Կեանքը,
Պարգեւատրուելով բազմանալը,
Եւ բարեշրջման ծառայութիւնը,
Որ լրիւ ի յայտ բերէ Յայտնութիւնը:

Կեանքը աճեցաւ շարունակ,
 Բարեշրջման օրէնքին տակ,
 Ան, որ էր միաբջիջային էակ,
 Միացաւ՝ կազմեց զանազան տեսակ:

Բոյսը եղաւ այն նախնական
 Բարեշրջումն զգացական,
 Տերեւները դարձան լոյսին արեգական,
 Իսկ արմատներն ալ ջուրին՝ կենսական:

Քանի կեանքը սկսաւ ջուրէն,
 Հարկ էր, որ ձուկը առաջ բոլորէն
 Ըլլար զգացական կենդանիներէն
 Որ կը տարբերէր բոյսերէն:

Չուկին յաջորդեցին շնչուն կենդանիները
 Եւ ջուրէ դուրս ապրելու կարողութիւնը,
 Ու լրիւ կազմուած զգայնութիւնը,
 Ինչո՞ւ չէ, նախնական իմացականութիւնը:

Ճիւղաւորուելով բազմացան տեսակները,
 Յառաջ եկաւ նաեւ նախնական մարդը.
 Ան ունէր այդ յաւելեալ առաւելութիւնը՝
 Իր լրիւ կազմուած իմացականութիւնը:

Աստուածայայտնութիւնը լրացած էր
 Եւ բոլորը կատարեալ ու բարի էր,
 Աստուած ալ մարդուն կը շնորհէր
 Անհատականութիւն մը իբր նուէր:

Մարդ գիտակից էր իր Էութեան,
 Թէ մի մասնիկն էր Աստուածութեան,
 Եւ կը բնակէր ի մէջ երանութեան,
 Մաս կազմելով յաւիտենականութեան:

Այդ անհատականություններ եղաւ իր «Ես»ը,
 Որ օգտագործելով իմացականություններ,
 Խաբեց մարդը, որ մոռնայ իր Եություններ,
 Կարծելով, թէ պատրանքն է ճշմարտությունը:

Խեղճ մարդը դարձած գերի իր «Ես»ին,
 Կը պայքարի դէմ տառապանքին.
 Հետեանք իր խաւարամուտ վիճակին
 Անգիտակից, թէ ճարը կայ ելքին:

Պէտք է այդ ըլլայ նպատակը կրօնքին,
 Քանի այդ էր սորվեցուցածը Յիսուսին,
 Վերստին յայտնություններ Աստուծային,
 Որ է երկրորդ գալուստը Քրիստոսին:

Ետք մարդկային այդ անկումէն,
 Ցած գիտակցութեան մակարդակէն,
 Պէտք է ազատի մարդ նորէն,
 Կերտելով իր կենցաղը վեհօրէն:

Մեզմէ կախեալ է Յայտնությունը՝
 Այդ վերստին կամ երկրորդ գալուստը.
 Կերտելով Հաւատք, յոյս եւ սէրը,
 Որ բարձրանայ մեր գիտակցություններ:





ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի մէջ երկրաչափութեան
Բոլոր ձեւերու գոյութեան
Եւանկիւնը անպայման
Նշանն է կայունութեան:

Տիեզերքի մէջ բոլոր
Երրորդութիւնն է որ
Կը տիրէ ասոր ու անոր
Անհրաժեշտ է եւ կարելոր:

Ամէն մի էակի վերաբեր,
Նախ ի յայտ կու գան խորհուրդներ
Անոնց կը հետեւին խօսքեր
Որոնց կը յաջորդեն գործքեր:

Նշոյլն երջանկութեան
Կապուած է երրորդութեան,
Այսինքն համերաշխութեան,
Խորհուրդ, խօսք եւ գործունէութեան:

Մարդիկ լի են փորձառութիւնով,
Իրենց ֆիզիքական մարմնով
Եւ կազմուած զգացումներով
Որ կը վերլուծուին տրամաբանելով:

Անբաժան է նաեւ ան
Ծովի, ջրի եւ օդի նման
Երեքն մէկուն բացակայութեան
Գոյութիւն չ'ունենար որեւէ բան:

Է Աստուծային յատկութիւն
Հայր Աստուծոյ Էութիւն,
Ս. Հոգու Գիտութիւն
Եւ Քրիստոսի Երանութիւն:

Յիսուս ըստ հետեւեալը.
-«Եւ եմ ճշմարտութիւնը»
Երկրորդը՝ «ճանապարհը»
Իսկ երրորդը՝ «կեանքը»:

Ստեղծագործութեան գալով,
Հայր Աստուծոյ ալ ըլլալով,
Սուրբ Հոգու զօրութիւնով
Մարմնացած է Քրիստոսով:

Հետեալբար եղրակացութիւնը
Հայր Աստուծոյ է ճշմարտութիւնը,
Սուրբ Հոգին ալ ճանապարհը,
Իսկ Քրիստոս ալ մեր կեանքը:

Հոգեւոր ճամբորդութեան
Պայմանը յաջողութեան
Հաւատք, յոյս եւ սէր երրորդութեան
Կերտումն է հրամայական:



ԻՆՉ Է ԱՂՕԹՔԸ

Խաւարամիտին՝

Առեւտուրի ցանկն է ան,

Բաղձանքներուն ու կարիքին

Ստանալու անարժան:

Մեղաւորին՝

Խոստովանանքն է ան,

Իր մեղքերուն ու հաւատքին

Արժանի քաւովեան:

Աստուածալախին՝

Երկրպագութիւնն է ան

Ստեղծագործիչին՝

Երկիւղածութեան նշան:

Հոգեւոր ճամբորդին՝

Աղբասանքն է ան,

Սիրոյ դաւանողին՝

Հաւատք եւ յոյս ստացման:

Ամէն մի անհատին՝

Անճաատութիւնն է ան

Աստուծոյ կամքին՝

Արդիւնքներէ անջատման:

Զարթուցեալին՝

Փառաբանութիւնն է ան,

Անհունին՝

Երանութեան նշան:

Գլխասրտին՝

Օրհնութիւնն է ան,

Միջոց Աստուածային

Բարիքներու գործադրման:

Ներհայեցողին՝

Կենցաղն է ան,

Մաքուր սիրտ կերտողին՝

Պայմանը սրբացման:



ԻՆՉ Է ՄԵՂՔԸ

Պարզապես, մեղքը անտեսելն է
 Յորդորները, որ մեզի տրուած է:
 Ան նաեւ օրէնքի դէմ գործելն է
 Եթէ արարքը կամքէ անկախ չէ:

Ի սիրոյն Ադամի եւ Եւայի,
 Մարդ մեղքով ծնած կ'երեւի,
 Հետեւաբար չարաչար կ'աշխատի
 Համար ճղճիմ մի ապրուստի:

Ինչ է եղեր Ադամական այդ մեղքը,
 Որ կը տառապեցնէ խեղճ մարդը:
 Ան կորնցնել է այն գիտակցութիւնը,
 Որ Քրիստոս է իր Էութիւնը:

Ուրեմն խաւարամտութեան օրերուն,
 Շփոթութեան մեջ ու շուարուն,
 Կը խոտորի մարդու զատողութիւն,
 Կարծելով թէ իր «Ես»ն է իր էութիւն:

«Ծա»ի բռնապետութեան մարդը գերի,
 Անգիտակից իր ապագայ վախճանի,
 «Ծա»էն յօրինուած եօթը մահացու մեղքերի
 Կ'ըլլայ մասնակցութիւնը անխուսափելի:

Մովսէսի տասը պատուիրանները,
 Սկիզբն էին սթափեցնելու մարդը,
 Որ փոխէ իր բռնած ընթացքը
 Եւ ունենայ այն բարձր գիտակցութիւնը:

Գիտակցութիւնը Աստուծոյ պարգէնն է,
 Սուրբ Հոգու զօրութեան ներգործումն է:
 Մեղքն ալ այն անխուսափելի արգելքն է,
 Որ զօրութիւնը մեր էութենէ ներս չգործէ:

Ուրեմն մեղքը Աստուած անտեսելն է.
 Մեր կեանքի սանձը Քրիստոսի չտալն է.
 «Ծա»ի բռնապետութիւնը արածնել է.
 Աստուածայայտնութեան փափաք չունենալն է:

Ան, բազմաթիւին մէջ միութիւնը չտեսնելն է,
 Այն Միութիւնը, որ ամէն ինչի ներգործած է.
 Անսահման Հաւատք եւ յոյս չկերտելն է.
 Բոլորի Հանդէպ անսահման սէր չունենալն է:

Պտուղը մեղքի մահն է անխուսափելի,
 Մեծ կորուստը կեանքի մը երանելի:
 Մերժումը ձրի պարգեւին՝ Ս. Հոգիի,
 Հարկ է, որ այս մեղքն ալ ըլլայ աններելի:





ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Մարդ կը կարծէ, թէ ճակատագիրը
 է ճակտի վրայ գրուած Աստուծոյ գիրը,
 Հետեւաբար կ'ըլլայ մեր կեանքի ծիրը,
 Եւ մեր բոլոր փորձառութիւններուն լիրը:

Հակառակ մեծամասնութեան կարծիքին,
 Սխալ է այս ըմբռնումը ընդհանուրին,
 Ամէն մի անհատ տէր է իր կեանքին
 Անցեալին, ներկային եւ ապագային:

Ամէն անձ ինքն է, որ կը կերտէ
 Այդ ճակատագիրը, որ կախեալ է
 Իր խորհուրդ, խօսք ու գործքերէ
 Եւ գիտակցութեան մակարդակէ:

Խորհուրդներէն կը ծագին խօսքերը,
 Խօսքերէն ալ կը ծագին գործքերը,
 Գործքերը կ'ըլլան սովորութիւնները,
 Սովորութիւններն ալ մեր նկարագիրը,

Նկարագիրն ալ կ'որոշէ ճակատագիրը:
 Ուրեմն մեր կեանքի տանջանքները
 Չեն մեղադրանքի պատճառ բախտը,
 Ալ անոնք բոլորն են մեր կերտածը:

Եթէ կ'ուզենք ուրախ կեանքեր,
 Պարտ ենք վանել վատ խորհուրդներ,
 Դատել ու խօսիլ բարի խօսքեր,
 Չատել ու գործել օգտակար գործքեր:

Բնաւ ուշ չէ սկսիլ այս ճանապարհին,
 Կարելի է նաեւ յաղթել ճակատագրին,
 Որ անգիտակցօրէն անցեալին
 Յօրինուած էր կողմէ խաւարամիտին:

Աս կը կարօտի արթնութեան,
 Եւ նկարագրի մը վեհութեան,
 Ու մակարդակ մը գիտակցութեան,
 Որ ան* չՀասնի այդ բարձրութեան:

*- ան = ճակատագիրը





ԴԺՈՒՔԸ

Վատ կեանքի մը հետեանք
 Կ'ըսուի թէ դժոխք կ'երթանք,
 Երբ վերջապէս մահանանք:

Սատանային վայրն է ան,
 Արեւը կրակով յաւիտենական,
 Առանց յոյսի ազատութեան:

Նայէ բոլորտիքդ ուշադրութեամբ,
 Տես որ կը գործեն ագահութեամբ,
 Դեմ իրարու վայրագութեամբ:

Մեծի պզտիկի լացն ու կոծը,
 Սովորական է կարծեք «Հնոցը»,
 Իր մարտերով այս աշխարհի ծոցը:

Հետևաբար մեր կարծած դժոխքը
 Է մեր վառած կրակն ու բոցը,
 Որ կը ներկայացնէ մեր կենցաղը:

Սատանային իշխանութիւնն է ան.
 Բայց գիտէ՞ք, ով է՞ այդ սատանան,
 Ան որ գերի է «Ծա»ի բռնապետութեան:

Կարելի է անհետացնել դժոխքը,
 Չեղբայցնելով «Ծա»ի ազդեցութիւնը,
 Որ կարենանք վերականգնել դրախտը:

Բարձր գիտակցութեան մակարդակը
 Եւ ծառայութեան տրամադրութիւնը
 Պետք է ըլլան առաջնակարգ կենցաղը:





Ո՞Վ Է ՍԱՏԱՆԱՆ



Առաւօտեան պայծառ աստղը,
Որ կ'աւետէր Աստուծոյ Լոյսը,
Որով Լուսաբեր էր իր անունը,
Բայց ուժգին եղաւ իր անկումը:

Հստ մարդոց, երեւակայութիւնով
Նկարագրուած է պոչով, կոտորով:
Անձէն դուրս էութիւն մը կարծելով,
Մարդ կը զբաղի ան մեղադրելով:

Ան խաբեբայ է ու նենգաւոր,
Կ'ուզէ նստիլ Աստուծոյ աթոռ,
Իրեն պատրանքն է կարելոր,
Քան թէ կենցաղ մը լուսաւոր:

Երբ մտքի ուղղութիւնը աշխարհի է,
Եւ անոր սա դա նային փարած է,
Անձը ինքզինք պէտք է մեղադրէ,
Որով սատանան անձին «Ես»ն է:

«Ես»ը՝ անձին անհատականութիւնը,
Էր առաւօտեան պայծառ աստղը,
Ունեցած բարձր գիտակցութեամբը
Կը վայելէր Աստուծոյ ներկայութիւնը:

Իմացականութեան դատողութիւնով,
Եւ զատողութեամբ մը ազատ կամքով,
Մարդ կ'ըլլայ սատանայ իր փափաքով,
Կամ՝ պայծառ աստղ մը՝ լի Աստուծով:



(ՆՈՒԿԱՍ ԺԷ:21)

ԴՐԱԽՏԸ

Վայր մը երանութեան
Հետ Աստուածութեան,
Առանց թշուառութեան
Երկնքի մէջ միայն:

Մարդու յոյսը ապագայի
Ի պարգեւ մի վե՛հ կենցաղի,
Յաւատենական մի կեանքի
Որ կ'իրականանայ յետ մահի:

Աս ըմբռնումը ընդհանուրի
Երախայական ըլլալ կը թուի:
Միտալ է ան եւ վիճելի
Քանզի ան չէ տրամաբանելի:

Դրախտը Գոյ է անկասկածելի
Բայց ան Հոս է, մէջ աշխարհի
Եթէ արտօնենք որ յայտնուի
Աշխարհը դարձնելով երկնքի:

Մեր բռնած ընթացքով,
Ու մեր ապրած կեանքով,
Ամենուրեք սեր սփռելով,
Եւ ծառայութեան Հոգիով,

Խաղաղութեան կերտումով,
Եւ փորձառութեան միջոցով,
Կեանք մը Քրիստոսով,
Ի յայտ բերել է դրախտը յոյսով:

Երբ Աստուած կը յայտնուի,
Ի՞նչպէս աշխարհ չվերածուի
Երանելի ու պայծառ դրախտի,
Դառնալով սուրբ երկնքի:

Եթէ դրախտը չստեղծենք
Աս աշխարհի մէջ մենք,
Չայն բնաւ պիտի չտեսնենք
Երբ այլեւս Հոս չենք:



ՄԱՀՐ

Մեր մարդկային տեսանկիւնէ,
Ամէն ծնունդ կը վերջանայ մահով:
Ուրեմն մէկը միտին Հակագիրն է.
Վախճան մը, որ կը սպասենք վախով:

Ամէն անձի ճշմարիտ ելութիւնը
Իր Կեանքն է անխուսափելի,
Մահը չէ Կեանքի Հակագիրը,
Կեանքն է ներկայութիւնը Քրիստոսի:

Երբ մարմինը ծերացած ու յովնած
Չի ծառայեր Կեանքի նպատակին,
Կեանքը կը թողու մարմինը մեռած
Վերադառնալով Աստուածային ակին:

Պէտք է ուրախութեամբ դիմաւորենք
 Մահը մեր մարմինն պատրանքային:
 Ան վերջ մը չէ, որ տխրինք
 Եթէ չենք վատնած կեանքը աշխարհային:

Մեծ սոսկում պէտք է տայ
 Ոչ թէ մահը մեր մարմինն,
 Այլ ան մահը որ կը սպառնայ
 Կեանքին՝ ի մէջ ողջ մարմինն:

Կեանքը իր գիտակցութեամբ
 Մի պարգեւը Աստուածութեան,
 Պէտք է աճի արթնութեամբ
 Ծառայելու Աստուածայայտնութեան:

Իսկ երբ Կեանքը կը մահանայ
 Դեռ ողջ մարմնի մէջ աշխարհիկ,
 Եւ երբ մարմինն ալ վերջանայ,
 Այն ատեն է որ կը մեռնինք:





ԱՊԱՀԽԱՐՈՒԹԻՒՆ

«Այ» նախադաս մասնիկը
 Կու տայ բառի մը Հակառակ իմաստը,
 Ուրեմն մարդու ապաշխարելը
 Կ'ըլլայ «աշխարհ(հ)եղ»ու Հակառակը:

Մտքի ուղղությունը դեպի դուրս է,
 Աշխարհի սա, դա եւ նայէ խաբուած է,
 Զգայնական զուարճութեան վրայ է,
 Բազմապատիկ ցանկություններով լի է:

Զինք տեսնելով զատ աշխարհէ,
 Կ'ուզէ ամէն ինչի տիրապետէ,
 Բռնուած Հպարտութեան թակարդէ,
 Տարբերութիւն մը չ'ունենար սատանայէ:

Ան, որ ապաշխարել կ'ուզէ
 Պէտք է մտքի ուղղութիւնը փոխէ,
 Պարտ է միտքը հեռացնէ
 Աշխարհիկ հետաանդուաներէ:

Անկեղծ աղօթքը եւ խոկումը
 Կը շարժէ Աստուծոյ գութը,
 Փոխելով մարդու գիտակցութիւնը
 Աշխարհէ դէպի իր Էութիւնը:

Հմարիտ Էութիւնը ամէն անձի
 Քրիստոսն է անկասկածելի,
 Ան միութիւնն է բոլորի
 Աստուածայայտնութեան բանալի:

Ապաշխարելը անխուսափելի,
 Յանձնուիլ է Աստուծոյ կամքի,
 Ան տեսնել է մէջ ամէն էակի
 Ներկայութիւնը Քրիստոսի:

Վարուիլ է ամէն մի անձի հետ,
 Նման վարուելու Քրիստոսի հետ.
 Բոլորին բաժնած օրհնութեան հետ,
 Կերտել է սէր եւ գութ յաւետ:





ԺԱՄԱՆԱԿԸ

Երբատարած միջոցին
Կը կարօտէր միածին
Գոյականը առանձին:

Ստեղծագործութեան Համար
Բարեշրջման յարմար
Պարտ էր ունենալ մի շատ դար:

Քառատարած միջոցին
Շտորհիւ չորրորդ լարին
Մարդ տեղեակ էր ժամանակին:

Ժամանակը անխափան
Երրորդութեան էնթական
Ունի իր անցեալն, ներկան ու ապագան:

Պատրանքային է ան,
Քանի, որեւ մարդ ու բան
Կարող չէ ապրիլ անցեալն ու ապագան:

Անտարակոյս ամէն մի էակ,
Որ գոյութիւն ունի այս արեւուն տակ,
Անընդհատ կ'ապրի ներկան միակ:

Ճերկան յառաջացող շուքն է,
Որ երէկը եւ վաղը իրարմէ կը բաժնէ.
Բոլոր յոյսն ալ ասոր մէջն է»:

Ներկան է միայն յաւիտեան,
Անցեալն է մի յուշամատեան,
Ակնկալութիւններն ալ ապագան:

Անցեալը կարող չէ փոխել,
Պարտ ենք զայն անտեսել
Եւ անդորրութիւնը չխանգարել:

Ապագան կարող չենք գիտնալ,
Պէտք չէ «երազներու» տեղ տալ,
Որ կարող են չիրականանալ:

Խորհուրդները պարտ ենք զսպել
Եւ ներկայի վրայ կեդրոնացնել
Ու նման հայեացքով գործել:

Ան միտքը, որ կ'ապրի միայն ներկան
Ունի մակարդակ մը գիտակցութեան,
Որ ուղին է յաւիտենականութեան:





ԳԻՏՈՒԹԻՒՆ

Դպրոցական կեանքի մէջ
Կը սորվինք շատ մը նիւթեր:
Եւ բոլոր ուսումէն վերջ
Կ'ըլլանք մէկ-մէկ «գիտուններ»:

Արդեօք այս է՝ այն գիտութիւն,
Որուն մենք միշտ կը բաղձանք,
Որ մեզի կու տայ ազատութիւն,
Որ բնաւ չտեսնենք տանջանք:


Գիտութեան նպատակն է
Վտարել սխալ ըմբռնումներ:
Հշմարտութիւնը ի յայտ բերել է,
Մեզ դարձնելով զարթուցեալներ:

Այդ գիտութիւնը կը խուսափի
Ընդհանուրին գիտակցութենէ:
Ան միայն կ'ըլլայ յայտնի
Գիտակցութեան մակարդակէ:

Ան գիտնալ ու տեսնելն է
Միութիւնը բազմութիւին:
Ան տեսնել ու ճանչնալն է
Ներգործութիւնը Անհունին:

Հաւատք եւ յոյս կարելոր էն
Այս ուղիւթեամբ ընթացողին:
Սէրն ալ կը յայտնուի ինքնիրեն
Այս ճանապարհը ճամբորդողին:

Անդադար յարատեւութեամբ
Հարկ է կերտել իմաստութիւն,
Անձնական փորձառութեամբ,
Որ է Աստուածային գիտութիւն:



ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

«Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն»*
 «Առակաց»ի մէջ գրած է Սողոմոն իմաստուն:
 Ան, որ զատած է Հոգեւոր ճանապարհն
 Ուրեմն պարտ է կերտէ իմաստութիւն:


Իմաստութիւնը Աստուածային գիտութիւնն է,
 Որ Աստուած բոլոր մարդկանց կը շնորհէ,
 Բայց մարդ ընդհանուր առմամբ կ'անտեսէ
 Աս հրաշալի շնորհքը, որ իրեն տրուած է:

Ան ցոյց կու տայ ճանապարհը ճշմարտութեան
 Եւ բարձր մակարդակ մը գիտակցութեան:
 Անձը կերտելով վեհ կենցաղ մը սրբութեան
 Կ'արժանանայ այդ շնորհքին Աստուածութեան:

Ան կու տայ կարողութիւնը ճիշդ դատողութեան
 Եւ կը պարգեւէ ձիրք մը ճիշդ զատողութեան:
 Ան կը կարօտի երկարատեւ փորձառութեան
 Եւ վեհ կենցաղի մը Աստուածապաշտութեան:

Ան շատ քիչ կը խօսի, բայց շատ կը լսէ.
 Ամէն արարք Աստուծոյ անկինէ կը դիտէ.
 Անխնասութիւն եւ ճշմարտութիւն կը քարոզէ,
 Ու մեր էութեան մէջ Քրիստոս կը ներկայացնէ:

* Առակաց Թ : 10



ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Ան Հօրմէ բխած զօրութիւնն է,
Որ բոլոր տիեզերքը կը թափանցէ,
Աստուածային գործիչ էութիւնն է,
Ստեղծագործութեան օրհնութիւնն է:

Ան Յիսուսի ըսած «Ճանապարհն» է,
Բոլոր գիտութեանց շտեմարանն է,
Ու բոլոր շնորհներու պարգեւիչն է,
Զի սիրոյ զօրութեան Հոսանքն է:

Վերաբերումի «Թագաւոր փառաց»ն է,
Որ «Հզօր զօրութեամբ իւրով» Տէր է,
Եւ «Տէր է կարող 'ի պատերազմի»ց,
Եթէ «Համբարձին դրոնք յաւիտենից»:

Իր շնորհները ամենուրեք կը տեղան,
Բոլորին ձրիօրէն առանց խտրութեան,
Բայց անոնք որ արժանի են կը ստանան,
Քանզի բացած են Հոսանքին ճամբան:

Խափանել Իր մուտքը մեր էութեան,
Անտեսել է շնորհները Աստուածութեան,
Այդ ալ աններելի մեղքն է անպայման
Որուն պատիժը կը կրենք յաւիտեան:



ՄԱՐԴԸ

Գագաթն էր ստեղծագործության
Կարողութեամբ գիտակցութեան
Միջոցը Աստուածայայտնութեան
Եւ կեանքի մը երանութեան:

Զուճը մի անհատականութեան
Եւ ծայրայեղ Եսասիրութեան
Անկումը եղաւ մարդկութեան
Ու սկիզբ մը խաւարամտութեան:

Մխրճուած մէջ տգիտութեան
Անգիտակից ճշմարտութեան
Տառապանքը շարունակական
Եղաւ վիճակ մը ողբերգական:

Անգիտակից իր իսկ Էութեան
Հաւատաց «Ես»ի խաբէբայութեան
Դառնալով զուճ զուարճութեան
Եւ տէր շատ մը ցանկութեան:

Ըլլալով ինք սատանայական
Դատապարտեց ինքզինք մահուան
Կորուստը յաւիտենականութեան
Որ պարգէն էր Աստուածութեան:



«ԵՍ»Ը

Աստուծոյ պարգեւը մարդկութեան՝
Գիտակցութիւնը անհատականութեան,
Նաեւ գիտակից Աստուածայայտնութեան,
Եւ յաւիտենական կեանքի մը երանութեան:

Ականատես բարձր Հոսանքին զօրութեան,
Արժեցաւ «Ես»ի փափաքը բռնապետութեան,
Ուղեց նստիլ աթոռը Աստուածութեան,
Ինք պարգեւելու այդ կենցաղը մարդկութեան:

Վստահելով մարդու իմացականութեան
Եւ խաբէբայական տրամաբանութեան,
Առաջնորդեց մարդը ձախողութեան
Պատրանքը փոխեց ճշմարտութեան:

Հետեանք իր անկարողութեան
Քանդեց մարդու կենցաղը երանութեան,
Չայն մխրճելով ի մէջ թշուառութեան
Եւ ցած մակարդակի մը գիտակցութեան:

Խորհուրդներու ողորումը շարունակական,
Չբաղեցնելով միտքը մարդկութեան,
Կորսնցուց ինքնութիւնը ճշմարտութեան,
Դարձնելով զայն գերին խաբեբայութեան:

Ան տուաւ մարդուն փափաքը ցանկութեան,
Եւ կենցաղ մը անընդհատ զուարճութեան:
Իսկ ցած գիտակցութիւնը՝ երկուութեան,
Խափանեց փորձառութիւնը միութեան:

Դարձուց խեղճ մարդը սաստանայական:
Բայց սէրն ու գովթը Աստուածութեան,
Չդիմացաւ մարդու ողբերգութեան,
Տեղ տուաւ Քրիստոսի մարդեղութեան:

Յիսուս իր կեանքովը սրբութեան,
Յոյց տուաւ ճանապարհը փրկութեան,
Իր մեծ արարքը անձնազոհողութեան,
Յոյց տալ էր ճիշդ կենցաղը մարդկութեան:





ՓԵՐԻՆ

Մարդ կ'ըլլայ գերի երկու ձեռով
Կամքէ անկախ պատճառով,
Կամ կամաւոր կերպով:

Կեանքը՝ կամքէ անկախ գերիի
Դժուար է անխուսափելի,
Բայց լի է յոյսով ապագայի:

Մարդը հարուստ իր ցանկութիւններով,
Իր կիրքերու բռնապետութիւնով,
Կ'ըլլայ գերի իր «Ես»ին՝ ուզելով:

Անգիտակից իր վախճանին
Եւ իր ողբերգական վիճակին
Փարած է իր ներկայ կենցաղին:

Կան անձեր գաղափարի գերի,
Իսկ ուրիշներ՝ հաւատալիքի գերի,
Ոմանք ալ՝ մոլորթեանց գերի

Կայ նաեւ փառամոլութեան գերի
Կամ իշխանավարութեան գերի,
Ինչպէս նաեւ՝ դրամին գերի:

Մարդ պարտ է ըլլայ ազատ՝ մարմնով,
Որոշելու ու զատելու իր ազատ կամքով,
Խորհելու ու դատելու բաց մտքով:

Ինչպէս կամքէ անկախ գերին
Յոյսով կ'աղօթէ միշտ Անհունին,
Որ արժանանայ ազատութեան օրին,

Պարտ է կամաւոր գերիին ալ,
Իր գործած սխալին անդրադառնալ
Ու ետ Քրիստոսի վերադառնալ:





ԽԱԼԱՐՈՆ

Խալարը ինքնին գոյութիւն չունի,
Մութը բացակայութիւնն է լոյսի:
Մարդ մէջն է հոգեկան խալարի
Երբ չի ձգտիր Աստուածային լոյսի:

«Ճ'ս եմ'Լո'յս աշխարհի»¹ ըսաւ Յիսուս,
Սփռեց ամենուրեք Աստուածային լոյս:
Ան մարդկութեան տուաւ նաեւ մեծ յոյս
Երբ ըսաւ. «Դուք էք աշխարհի լոյս»²:

Պարտ ենք մենք ալ խալարէ դուրս գալ,
Մեր մտքի ուղղութեամբ՝ լոյսի մէջ մնալ,
Որով «Աստուած Լոյս է»³ կ'ըսէ առաքեալ
Հետեւաբար պէտք է խօսքին հաւատալ:

Եօթը մահացու մեղքերը՝ «Ճա»ի թակարդը
Կը ստիպեն որ մարդիկ մնան խալարը:
Անոնք գոյ չեն, պարզապէս են պակասը
Ան յատկութիւններուն, որ ունին դրականը:

Ատելութիւնը գոյ չէ, ան սիրոյ պակասն է,
Ագահութիւնը՝ գոհունակութեան պակասն է,
Ծուլութիւնն ալ՝ ծառայութեան պակասն է,
Բարկութիւնը՝ ներողամտութեան պակասն է,

Նախանձը՝ գոհունակութեան պակասն է,
 Հպարտութիւնը՝ հեզութեան պակասն է,
 Բղջախոհութիւնը՝ սիրոյ հոսանքի վատնումն է,
 Ուրեմն մեղքի թակարդը, խաւարամտութիւն է:

Որպէսզի ձեռք բերել ազատութիւն
 Ու վայելէլ յաւիտենականութիւն
 Պարտ է կերտել իմաստութիւն
 Եւ չզատել խաւարամտութիւն:

1-(Յովհաննու Ը:12)

2-(Մատթեոսի Ե:14)

3-(Ա. Թուղթ Յովհաննու Ա:5)





Ո՞Վ

Ո՞վ եմ ես

Ո՞վ ես դուն,

Պարզ է կարծես

Այս գիտություն:

Պատասխանը յայտնի է

Մեր անունն է որ կ'ըսենք,

Բայց «ի՞նչ է անունը» չէ

Այն Հարցումը որ կը ըսենք:

Ես մի բան կը յիշեմ

Փիլիսոփայի մը ըսածը,

«Այդ խորհիմ Հետեւաբար Եմ»

Կը պատասխանեմ նմանը:

Բոլոր խորհուրդները

Կու գան ու կ'երթան,

Հակառակ ըսուածները

Անոնք չեն յաւերժական:

Կը դժուարանայ Հարցը,

Մեծ շփոթութեան մէջ

Կ'ըսենք մեր արհեստը

Աս ալ չ'ըլլար մի վերջ:

Ճարահատ կը խորհինք

Թէ մենք մեր զգացումներն ենք

Բայց Հարցը ետք կու գայ ինք

Յայտնելով թէ մենք անոնք չենք:

Լոյս մը կը ծագի ցարդ-

Եւ մեր մարմինը ցոյց կու տանք:

Ներքին ձայնը կ'ըսէ «Ո՞վ մարդ,

Խորհէ՛ ելլեսոյ տուր պատասխանք»:

Միլիոնաւոր բջիջներ

Կու գան ու կ'երթան ամէն օր,

Փոփոխութեան կ'ենթարկուէր

Այդ մարմինը նաեւ Հզօր:

Պարզ չէ եղեր այս գիտություն

Պատասխանը այդ Հարցումին,

Ան կը գրաւէ մեր էութիւն

Կ'ըլլայ դժուարութիւն մեր մտքին:

Ո՞վ է գիտակից մեր խորհուրդին

Եւ թափանցած մեր մարմին,

Ականատես մեր զգացումին,

Որ է Հասարակ բոլորին:

Գիտակցութիւնն է ան

Ամէն մի ողջ էակին,

Որ է միշտ անապական

Այդ Լոյսը Աստուածային:

Կեանքն է ան ամէն անհատի

Անմահ Կեանքը Քրիստոսի:

Ուստի պատասխանն է Հարցումի

«Ան եմ ես, Ան ես դուն» երանելի:



ԿԵԱՆՔԸ

Աստուծոյ նուէրը մարդկութեան,
Որ է կորիզը մարդու էութեան:
Այն մանսիկը Աստուածութեան,
Որ է Քրիստոս ի մէջ մարդկան:

Գիտակցութիւնն է ան ամէն մարդու,
Ան ըյսն է իրենց մարմիններու,
Ինչպէս նաեւ զգացումներու
Եւ կարողութեան տրամաբանելու:

Մարդ ինչպէս կ'օգտագործէ
Այդ կեանքը, որ իրեն տրուած է,
Անտարակոյս այդ ալ իր նուէրն է
Որ Աստուծոյ էտ կը վերադարձնէ:

Պիտի ուզէի՞նք վատ նուէր մը տալ
Եթէ կ'ուզէնք Աստուծոյ Հետ մտալ
Ու մեր տուած նուէրով արդարանալ
Երբ այս աշխարհի վրայ կայ մահանալ:

Լաւագոյն նուէրը Աստուածութեան
Կերտել է կենցաղ մը սրբութեան,
Որ ծառայէ Իր յայտնութեան,
Որ է գագաթը Աստուածպաշտութեան:



ԱԶԱՏ ԿԱՄՔ

Կենդանիներէ կը տարբերի մարդ,
Իրեն պարգետուած ազատ կամքով,
Աստուծոյ մէկ շնորհքը՝ մարիթ
Որ ան գործէ ճիշդ հայեացքով:

Անասունը չէ պատասխանատու
Իր ըրածէն լաւ ու վատ,
Իր արարքներն են բնազդու
Կամքէ անկախ ու զատ:

Մարդ կարող է դատել
Թէ ի՞նչ է բարի կամ ի՞նչ է չար,
Նաեւ կարող է դատել
Օգտակար է՞, թէ վնասակար:

Ջախջախիչ մեծամասնութիւն,
Կարծելով թէ ազատ կամքով,
Տոյց կու տայ գործունէութիւն
Իր ծնած բնոյթով:

Պարտ ենք կերտել իմաստութիւն՝
Ճիշդ խորհելու ու խօսելու,
Ազատ կամքով զատողութիւն՝
Լաւագոյնը գործելու:

Դժուար է յաղթել մեր բնութեան,
Կը կարօտի զօրաւոր կամքի
Եւ Աստուածային օգնութեան՝
Ի պատասխան մեր աղօթքի:

Որով մարդը կը տարբերի
Անասունէն ապա ի՞նչով,
Եթէ ոչ իր երանելի
Հրաշագործ Քրիստոսով:



Ամէն անձ ունի ներքին լուռ մի ձայն,
Մտիկ պէտք է ընել, որ իմանանք զայն.
Ան չի պարտադրեր այլ կը թելադրէ,
Նաեւ չի նեղեր միայն կը զգուշացնէ:

Անձը պէտք է արթուն ըլլայ որ իմանայ
Այդ ձայնը որ անընդհատ կը մրմնջայ.
Դժուար է լսել քանզի շատ աղմուկ կայ
Երբ տրամաբանութիւնը կը պոռայ:

Ան կը խօսի միայն մեր օգտին Համար,
Ան միշտ արթուն է, չի գիտեր խաւար,
Կացութիւնը բոլորէն առաջ է դատած
Իմացականութիւնը տակաւին չարթնցած:

Մարդ արարած ընդհանրապէս կ'անտեսէ
Այդ օգտակար ձայնը որ իրեն տրուած է,
Իսկ տրամաբանութիւնը է շատ պերճախօս
Մասնագէտ Համոզիչ է, բայց կը փորէ փոս:

Երբ եղած թելադրութիւնը մեր բնութեան դէմ է,
Իմացականութիւնը զայն բնոյթին կը յարմարցնէ,
Քանզի ան «Ես»ի բանակին Հրամանատարն է,
Ուրեմն միշտ «Ես»ի փափաքն է որ կը կատարէ:

Պարտ է ամէն անձ մտիկ ընէ այդ ձայնին,
Եթէ չ'ուզեր որ ինք տուժէ ապագային,
Քանզի ան ձայնն է ներքին Քրիստոսին,
Կը Համապատասխանէ Աստուծոյ կամքին:



ՀՈՒՆՁՔԸ

Բնութեան մէջ Հունտ կայ կը ցանենք,
 Հունձքը տարիներ յետոյ կը քաղենք.
 Իսկ ուրիշ Հունտ ալ կայ որ կը ցանենք,
 Բերքը տարին երկու անգամ կը Հնձենք:

Ան ինչ որ կը խորհինք իբր խորհուրդներ,
 Եւ ան ինչ որ կը խօսինք իբր խօսքեր,
 Ու այն բոլորը որ կը գործենք իբր գործքեր,
 Կը ներկայացնեն մեր ցանաժ Հունտեր:

«Ինչ որ ցանես ան կը Հնձես»* Կ'ըսէ Գիրքը,
 Ուրեմն մեր կեանքի բոլոր պատահարները
 Կը ներկայացնեն բոլոր քաղուած բերքերը,
 Կը ցոլացնեն մեր բոլոր ցանաժ Հունտերը:

Շատ անգամ մարդ չի կրնար հետեցնել,
 Արդիները պատճառին չի կրնար կապել:
 Տարիներ կրնայ զանոնք իրարմե բաժնել,
 Ու մարդու հասկացողութիւնը խափանել:

Եթէ կ'ուզենք կեանք մը երջանկութեան,
 Ինչպէս նաեւ կենցաղ մը խաղաղութեան,
 Որպէսզի ապրինք ի մէջ անդորրութեան,
 Պարտ էք չցանել Հոնտեր եսասիրութեան:

Անհրաժեշտ է որ կերտենք իմաստութիւն
 Եւ իմաստութեամբ ընենք դատողութիւն
 Ու իմաստութեամբ գործենք զատողութիւն
 Ու բարի խորհուրդ, խօսք ու գործունէութիւն:

Բարի Հոնտեր կու տան բարի Հոնձքեր,
 Իսկ չար Հոնտեր ալ չար Հոնձքեր:
 Պիտի ուզէի՞նք ցանել որոմի Հոնտեր,
 Որ այրուելու պիտի դատապարտուէր:

*- Ձի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեցէ: Պաղատացիս Զ:8





ՊԱՏԵՐԱԶՄԸ

Աբել եւ Կայենի արարքին յարմար,
Մարդ կը կռուի անդադար.
Ըլլայ անհատական պայքար,
Կամ հաւաքական մարդապար:

Ազգեր կ'ելեն ազգերու վրայ,
Կը փճացնեն ժողովուրդներ անինչայ
Միլիոնաւոր մարդ կը մահանայ,
Ողջ մնացողն ալ կ'ողբայ:

Մարդիկ գերի իրենց «Ճա»ի,
Ընդառաջելով յօրինուած սուտի,
Անգիտակից իրենց գործած աւերի,
Կը կերտեն կենցաղ մը կորուստի:

Միակ ընդունելի պատերազմը,
Է «Ճա»ի դէմ ուղղուած մարտը,
Վերջ տալու իր բռնապետութեանը,
Ի յայտ բերելով Քրիստոսը:

Որ մարտը պսակուի յաղթանակով,
Անձը պարտ է զինուի ուրախութիւնով,
Ինչպէս նաեւ արդարութիւնով,
Եւ ինչու չէ անախտութիւնով:

Նաեւ պետք է զինուի հաւատքով,
Եւ անկասկածելի յոյսով,
Ու սիրոյ արտայայտութիւնով,
Որ զինուիլ է Ս. Հոգու զօրութիւնով:

Յաղթականը այս մարտի,
Կ'արժանանայ մեծ պարգևի,
Որ է փրկութիւնը իր Հոգիի,
Խոստում մը յաւիտենական կեանքի:



ԿԵՆՅԱՂԸ

Ամեն անձ որ կը ծնի,
Իր մանկութենէ կը սկսի
Կերտումը իր բնոյթի:

Կենցաղը ամեն անձի,
Կը յարմարի իր բնոյթի
Ու իր կեանքի նպատակի:

Մեծամասնութիւնը կը ձգտի
Հանգիստ մի կեանքի,
Որ է զուարճութեամբ լի:

Լաւ ուսում մը դպրոցական
Եւ լաւ դիրք մը ընկերական
Անհրաժեշտ են անպայման:

Զբաղմունք մը գործնական
Որ կ'ապահովէ լաւ նիւթական
Առանց վշտի ու յոգնութեան:


Հաւատարիմ մի կեանքի ընկեր
Եւ երկու բարի զաւակներ
Նաեւ առողջութեան յոյսեր:

Հանգիստ կերպով ծերանալ
Մի քանի թուոնիկ տեսնալ
Հանդարտօրէն ալ մահանալ:

ԱստուածաՀաճոյ կենցաղը
Ունի իր վեհ նպատակը
Որ է Աստուածայայտնութիւնը:

Իրականացնելու այդ նպատակը
Անձը պարտ է փոխէ իր բնոյթը,
Որ կերտած է իր մանկութեանը:

Վեհ կենցաղի մը գոյութեան
Խաղաղութիւնն է պայման
Սեր եւ գովծն ալ Հրամայական:



ԻՆՉ Է ՍԷՐԸ

Ֆիզիքականին՝

Չգողական ուժն է ան.

Սերը գոյականին՝

Ստեղծագործիչ պատուիրան:

Կեանքին՝

Հրապուրիչ ուժն է ան.

Բազմանալու ոճին՝

Սեռային պատուիրան:

Չգացականին՝

Հմայական ուժն է ան.

Վերաբերումին՝

Սիրալիր պատուիրան:

Մտայինին՝

Չոհաբերական ուժն է ան.

Ողորմութեան ու գութին՝

Վեհանալու պատուիրան:

Իմացականին՝

Հասկնալու ուժն է ան.

Անհունի կամքին՝

Կենցաղօգուտ պատուիրան:

Հոգեկանին՝

Յառաջացման ուժն է ան.

Հանապարհին՝

Պայծառատես պատուիրան:

Քրիստոսին՝

Քաջողական ուժն է ան.

Ամեն մի էակին՝

Սրբանալու պատուիրան:



ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

Զոհողութիւնը սիրոյ արտայայտութիւնն է.
 Հմարիտ սերը ամենեւին անձնասէր չէ,
 Իսկապէս սիրողը զոհուելու պատրաստ է,
 Սիրոյ փաստը՝ սիրածին Համար զոհուիլն է:

Մայր մը պատրաստ է զոհելու իր կեանքը,
 Վտանգէ մը ազատելու Համար իր զաւակը:
 Աս ցոյց տալ է իր սիրոյ Հասած մակարդակը,
 Եւ կը ցոյցանէ զաւակին Հետ մօր մը կապը:

Հաստ անձեր անընդհատ կ'ըսեն թէ կը սիրեն.
 Արդեօք քանիսն է՞ր զոհուելու պատրաստ են:
 Հմարիտ սերը յայտնի չըլլար միայն խօսքէն,
 Անհրաժեշտ է զայն ցոյց տալ գործնականօրէն:

Սիրոյ գազաթնակետը Աստուածային սէրն է:
 Աս այդ սէրն է որ Նոր Կտակարանը կ'աւետէ:
 Յովհաննէս աւետարանիչ բացայայտ գրած է.
 «Աստուած սէր է»,* Հետեւաբար միշտ կը սիրէ:

Յիսուսի կեանքը կը փաստէր Աստուծոյ սէրը,
 Ցոյց տալ էր զոհողութեան գազաթնակետը,
 Մարդկութեան Համար զոհելով Իր կեանքը,
 Ցոյց տուաւ բոլորիս փրկութեան ճանապարհը:

* = Ա. Յովհաննէս Գ: 16



ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Հայր Աստուած է սիրոյ ակը
Ս. Հոգին ալ Անոր Հոսանքը
Քրիստոս ալ մարմնացումը:

Ուրեմն սէրն ալ անպայման
Պէտք է ըլլայ մարդկութեան
Ճշմարտութիւնը իր էութեան:

Աստուծոյ սիրոյ արտայայտութիւն՝
Է Աստուածային ողորմութիւն
Ուղղուած դէպի մարդկութիւն:

Մարդու սիրոյ արտայայտութիւն՝
Է անդադար Աստուածապաշտութիւն
Ուղղուած դէպի իր Աստուծոյն:

Նոյն սէրը ուղղուած անհատին
Արտայայտութիւնն է գութին
Եւ տեսնել է ներկայութիւնը Անհունին:

Գործնական երեւոյթը գութի
Ծառայութիւնն է Հանդէպ բոլորի
Մինչեւ նոյնիսկ անձը դառնայ խոցելի:

Ծառայութիւնը ծիսակատարութիւն մըն է
Մատակարարուողին օգնութիւն մըն է
Որ ծառայողը Աստուծոյ Հետ կը Հաղորդէ:

Ծառայութիւնը եսասիրութեան դէղն է
Եւ անձին մէջ սուրբ սիրտ կը կերտէ
Բազմութիւն մէջ միութիւնը տեսնել է:



ՀԱՅԱՏԵՐԱ ՊՏՈՒՐԸ ՍԵՐՆ Է.

ԵՒ ՍԻՐՈՂ ՊՏՈՒՐԸ ՇԱՐԱՅՈՒԹԻՒՆՆ Է



ՃԱՆԱԴԱՐՀԸ ՀԱՒԱՏՔԻ

Աստուածային շնորհքով
Մարդ կը ծնի Հաւատքով
Կը մոռնայ զայն շուտով
Կամքէ անկախ պատճառով:

Մեր մանկական օրերու
Կարողութեամբ մտածելու,
Տուեալներ բազմաթիւ
Կ'ըլլան Համոզումներ անթիւ:

Ճամբորդութիւն մըն է ան
Կեանքի մը տեսողութեան,
Համոզումն է յառաջընթաց
Իսկ Հաւատքն ալ վերջնականաց:

Ի պատշաճի կացութիւններ
Կը փոփոխեն Համոզումներ
Ի յայտ բերելով մտածումներ
Եւ կից շատ մը Հարցումներ:

Սկիզբն է Հաւատքի
Նշոյլներ վարանումի
Հանդէպ Համոզումներու
Որ պարտ են վերջանալու:

Հաւատքը անխախտելի է
Երբ իմաստութեամբ կերտուած է
Ու զինուած շարունակական
Փորձառութեամբ՝ անձնական:

Տեր ճշմարիտ Հաւատքի
Անհատը երանելի
Ճամբան կը բանայ յոյսի
Եւ սիրոյ անսահմանելի:

«Հաստեա՛ Հաւատով
Հաստատեա՛ յուսով
Հիմեցո՛ սիրով»
Ճամբորդել է Քրիստոսով:



Յոյսը Աստուածային օրհնութիւն մըն է:
Ան զգացական եւ հոգեկան վիճակ մըն է:
Այդ յոյսը ճշմարիտ հաւատքի արդիւնքն է,
Հետեւաբար ան անձին մէջ գոյ է ի ծնէ:

Յոյսը անձին կու տայ զօրութիւն,
Նաեւ անձին կու տայ քաջութիւն,
Արարքը իրականացնելու կարողութիւն,
Հետն ալ՝ պատասխանատուութիւն:

Յոյսը կը վանէ վախը
Ան կը լուսաւորէ միտքը
Կ'ընդարձակէ հայեացքը
Դիւրացնելով յաղթանակը:

Յոյսը պէտք է աճի շարունակ
Վճռականութեան լոյսին տակ
Ունենալով մի վեհ նպատակ
Եւ իրականացնելու փափաք:

Այդ իրականացումը կարօտ է հաւատքի.
Ս. Հոգիի զօրութեամբ է որ յոյսը կ'աճի
Տալով կամքի զօրութիւն որ անձը յաջողի,
Զինուած կարողութեամբ մը անհասկնալի:

Յոյսի վախճանը մահուան դուռն է
Քանզի յուսահատութիւնը դժոխք է:
Իսկ յոյսն ալ զարթուցեալին երազն է
Երազն ալ Աստուածայայտնութիւնն է:



ԼՈՅՍԸ

Լոյսը դրական զօրութիւնն է
Որ տեսողութիւնը կ'ապահովէ:
Ան քանի տիեզերքի մէջ գոյ է
Խաւարը միշտ կը փառաստէ:

Ան բնագիտութեան մէջ կը գրաւէ
Զօրութեան վայր մը, որ յստակ է:
Ան իր գեղեցկութիւնը կը յայտնէ
Երբ իր եօթը գոյները կը զատէ:

Կայ նաեւ լոյս մը որ աչքը չի տեսներ
Եւ գիտուններ բնոյթը չեն Հասկցեր,
Որով ան «մութ զօրութիւն» է կոչուեր,
Տիեզերքի մէջ ամէն ինչի է թափանցեր:

Անտեսանելի լոյսն է որ կը խաղայ
 Անհուն տիեզերքի պաստառին վրայ,
 Ստեղծագործութեան գործիչ ծառայ,
 Եւ ան բոլորին կեանք է որ կու տայ:

Այդ լոյսին ակը Հայր Աստուած է.
 Ան Սուրբ Հոգիի զօրութիւնն է,
 Մեր «տաճար»ին մէջ Քրիստոսն է,
 Ան բոլորին Հոգին ու եութիւնն է:

Պիտի չուզէի՞նք լոյսը տեսանելի ընել,
 Զայն բարձր աշտանակի վրայ դնել,
 Եւ իր պայծառ լոյսը ամենուրեք տիուել,
 Քան թէ զայն գրուանի մը տակ պահել:

Պարտ ենք մեր անձերը պատրաստել
 ԱստուածաՀաճոյ կենցաղ մը վարել,
 Եւ զանոնք ընդունակ անօթներ ընել,
 Ու այդ Լոյսի Յայտնութեան ծառայել:





ԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Ամէն անձի ճշմարիտ Էութեան բնոյթն է ան:
Անկումի Հետեւանք անձը կորսնցուցած է զայն:
Ան վերագտնելը Յիսուս քարոզեց վրան լերան.
Երանի անոնց, որոնք կը գտնեն այդ ճամբան:

Երանութեան փորձառութիւնը բաց է բոլորին,
Եթէ անձը իր կամքով զատէ կենցաղը սուրբին,
Այդպէս կ'արժանացուի Աստուածային շնորհքին,
Որ կը գերազանցէ երջանկութիւնը աշխարհին:

Նախ անձը պարտ է ըլլալ «Հոգիով աղքատ»,
Նաեւ Հպարտութեան թակարդէ լրիւ ազատ,
Միտքն ալ Հսկուած ու զսպուած եւ Հանդարտ,
Առանց խորհուրդներու ողորդումի անընդ-Հատ:

Ըստ Յիսուսի քարոզին երանելի է նաեւ սգաւորը.
Ի՞նչ կը խորհինք, թէ ի՞նչ է նշուած սուգի պատճառը,
Եթէ ոչ անձին իր բարձր գիտակցութեան կորուստը,
Սգաւորին միսիթարանքը պիպի ըլլայ երանութիւնը:

Երանութեան ուղիներն են, Հեզութեան ճամբան,
Յանձնուիլ է բոլոր էութեամբ Աստուածութեան,
Միութեան գաղափարով վերջ տալ է երկուութեան:
Քրիստոս տեսնել է մէջն ամէն անհատի էութեան:

Ճշմարիտ արդարութիւնը միշտ Աստուածայինն է,
Երանելի է նաեւ այն անձը որ անօթի ու ծարաւ է
Արդարութեան Համար, որ Աստուած կը ներկայացնէ,
Իր տիրացած երանութիւնը զինք պիտի յագեցնէ:

Երբ անձը կը տեսնէ միութիւնը բազմաթիւին մէջ,
Կը սիրէ բոլորին, քանզի ինք կ'ապրի Աստուծոյ մէջ,
Սիրոյ արտայայտութիւնը՝ գութն ալ կ'ըլլայ իր տէնչ,
Աստուած ալ կ'ողորմի, զինք կը մկրտէ երանութեան մէջ:

Երանելի են նաեւ բոլոր անոնք որոնք սուրբ են սրտով,
Մտքի ուղղութիւննին փոխած են իրենց խորհելակերպով,
Խորհուրդներէ դադրած, Քրիստոսի վրայ կեդրոնանալով,
Անոնք պիտի պարգեւատրուին Աստուած տեսնելով:

Առանց խաղաղութեան կարելի չէ երանութիւնը մեր,
«Խաղաղութիւն թողում՝ ձեզ»* է Յիսուսի շնորհած նուէր,
Խաղաղութեան կերտումով կ'ըլլանք Աստուծոյ որդիներ՝
Արժանի անօթներ, որպէսզի Քրիստոս մեր մէջ յայտնուէր:

Մեծամասնութեան մտայնութիւնը աշխարհի վրայ է,
Երբ մեր կենցաղը ընդհանուրի Համապատասխան չէ,
Հալածանքը ու նախատինքն ալ մեզ կը Հետապնդէ:
Միտքը կեդրոնացած Քրիստոսի վրայ, ճիշդ ուղին է:

* = Յովհաննու ԺԳ:27



ԻՆՉ Է ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

Փրկութիւնը խոստում մըն է,
Որ ամէն կրօնք կը քարոզէ
Եթէ անհատը Հետապնդէ
Կեանք ու կենցաղ մը վեհ:

Ան վերջն է տառապանքի,
Բոլոր ցաւերու ու վշտի,
Ինչպէս նաեւ չարչարանքի,
Որ է կեանքը խաւարամիտի:

Ան կեանք մըն է երանութեան,
Եւ ճշմարիտ ազատութեան
Ու սիրոյ արտայայտութեան
Եւ բարձր գիտակցութեան:

Հետեանք է արթնութեան,
Աստուծոյ Հետ Հաղորդութեան.
Նոյնանալ է Հետ իր Էութեան,
Ըլլալ է Քրիստոսէ անբաժան:

Աստուծոյ ձրի պարգէնն է
Եթէ մեզի Համար ընդունելի է:
Ան մեծ ջանքի Հետեանք է
Որ մեզ ընդունակ անօթներ ընէ:

Մեծ ջանքը խեղճ մարդուն
Փոխել է իր մտքի ուղղութիւն
Աշխարհէ դէպի իր Էութիւն
Այս կեանքի մէջ, որ չէ մնայուն:



ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ

Փրկութեան միջոցներէն մին,
Ըստ Յիսուսի պատասխանին,
Նիկողեմոսի ուղղած Հարցումին,
Անձ մը, որ փարած էր օրէնքին:

Ակնարկը չէր ֆիզիքականին,
Այլ՝ Հոգիէն ու ջուրէն ծնունդին,
Փոխուիլն էր ուղղութիւնը մտքին,
Դէպի իր Էութեան եւ ոչ աշխարհին:

Գալով փրկութեան արգելքին,
Փարիլ է աշխարհի սա, դա, նային:
Անտեսել ան, որ է պատրանքային,
Մտնել է փրկութեան ճանապարհին:

Նիկողեմոս փարած էր օրէնքին,
Իսկ երիտասարդը իր դրամին.
Ասոր Համար աւյոթոյրը Յիսուսին,
Բաժնել էր Հարստութիւնը աղքատին:

Փոխել ուղղութիւնը մեր մտքին
Արդիւնքն է այն մեծ զարթոնքին
Որ պարտ է ծաղկի մէջ ամէն անձին
Անդրադարձ մը Աստուծոյ շնորհքին:



ՃՀՄԱՐԻՏ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Ճշմարիտ ազատութիւնը չէ այն, զորս կ'իմանաք,
Որ կառավարութիւններ կը հռչակեն. տարօրինակ է,
Եւ այդ մոլորած ազատութեան անուան տակ
Կը գործեն աւերներ, պատերազմելով շարունակ:

Ճշմարիտ ազատութիւնը բարեշրջում մըն է.
Ան, ինքնաճանաչումի ճանապարհ մըն է.
Պատրանքայինին գիտակցօրէն վերջ տալ է,
Ան, վե՛հ գիտակցութեան մակարդակ մըն է:

Անգիտակից բարեշրջումը կը ծառայէ մարմինն,
Իսկ գիտակից բարեշրջումը՝ հոգեկան աճումին,
Առանց ազատութեան կարելի չէ այս վերջինին,
Ան լրիւ հնազանդիլ է Աստուածային կամքին:

Գիտակից բարեշրջումը կարօտ է ժամանակի,
 Ան պետք է ըլլայ փորձառութիւններով լի.
 Եւ արթնութեամբ մը, Հետեւանք տառապանքի,
 Արարքներու արդիւնքները նուիրել է Քրիստոսի:

Ազատութիւնը կ'արտայայտէ գեղեցկութիւնը,
 Ան կը ցոլացնէ անձին իր Էութեան Լոյսը,
 Ան կ'արտօնէ որ արտայայտուի սէրն ու գութը,
 Ան ստեղծագործիչ է կ'օգտագործէ ծառայութիւնը:

Ազատութեան զօրութիւնը ապրող կրակն է,
 Որ Ֆիզիքական բանտի սահմանը կը գերազանցէ:
 Ան բազմաթիւն մէջ միութիւնը տեսնել է
 Ճշմարիտ Էութեան՝ Քրիստոսի Հետ նոյնանալ է:

Անձը փարած իր «Ես»ին, կը դառնայ անոր գերին,
 Կը զօհէ ճշմարիտ ազատութիւնը Աստուածային,
 Տիրանարով խաւարամտութեան՝ «Ես»ի ժառանգին,
 Հիւանդութիւն ու վիշտը կ'ըլլան սկիզբը տառապանքին:

Ճշմարիտ ազատութիւնը չէ եսթակայ որեւէ սահմանի,
 Ան կը գոյատեւէ նոյնիսկ ի մէջ Ֆիզիքական բանտի,
 Ան կ'ապաւնի միայն գիտութեան ու կը գիտակցի,
 Իր ճշմարիտ Էութեան՝ Հրաշագործ Քրիստոսի:





ՅԱՐՈՒԹԻՒՆ

«Քակեցէք զտաճարդ զայդ,
 Չերիս աւուրս կանգնեցից զդա»:*
 Կը շէշտ Յիսուս բացայայտ
 Կարծէք հրաւեր մը կուտայ:

Խաշուեցաւ ու թաղուեցաւ
 Տաճարն էր որ քակուեցաւ
 Երրորդ օրը յարութիւն առաւ
 Տաճարը դարձեալ կանգնեցաւ:

Յիսուսի զօրութեամբ յարութիւն առին
 Մահացած աղջիկը իշխանին,
 Ղազարոսը, նաեւ որդին այրիին,
 Յոյց տալով անմահութիւնը Հոգիին:

Բայց իր հրաշափառ Յարութեամբ,
Կոչ մըն էր Համայն մարդկութեան,
Ան կը Հաղորդէր յստակութեամբ,
Մեր ալ կարելիութիւնը յարութեան:

Արդեօք Քրիստոս միշտ պիտի ննջէ՞
Մեր այս մարմինն մէջ աշխարհիկ,
Պէտք չէ՞ որ Յարութիւն առնէ
Որպէսզի դրախտը վայելէն մարդիկ:

Պէտք է Հետեւիք Յիսուսի օրինակին,
Եւ չի փարինք խաբեբայութեան «Ես»ին,
Դատապարտենք զայն ու գամենք խաչին,
Որ արժանանանք Յարութեան Քրիստոսին:

* «Քակեցէք այս տաճարը, ու երեք օրուան մէջ պիտի կանգնեցնեմ զայն»
Յովնանու Բ:20





ԽԱԶԻՆ ՃԱՄԲԱՆ

Խաչը՝ մահուան միջոցը
Ոճրագործին պատիժը
Դատապարտելի վերջը
Անարգանքի մեծ նշանը:

Խաչելովժեամբ Յիսուսի
Նղաւ մարդու ակը յոյսի
Փրկովժեանը իր Հոգիի
Նշան մը, միշտ պաշտելի:

Իր խաչի մահովը Յիսուս
Ցոյց կուտար ամէնուս
Զոհողովինը իբր փարոս
Որ յարուսցէ Քրիստոս:

«Խաչդ առ ետեւէս եկուր»*
Էր պատգամը ընդՀանուր
Պարտ էնք Հետեւիլ Անոր
Ու խաչէնք մեր «Ես»ը բոլոր:

* - «... եթէ դք կամիցի զկնի իմ գալ՝ ուրացի զանձն, եւ առցէ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ:» (Մատթէոս 23:24)

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Առաքինություն մը, որ ամէն մարդ կը գնահատէ.
Երջանիկ ամուսնութեան մը Համար անհրաժեշտ է.
Անկեղծ ընկերութեան մը յաջողութեան կորիզն է.
Գործի մէջ գնահատուելու Համար պայման մըն է:

Հարկ է, որ անձ մը Հաւատարիմ ըլլայ իր խօսքին,
Ինչպէս նաեւ՝ իր ընտանիքին, գաղութին եւ երկրին:
Հաւատարիմ պէտք է ըլլայ իր մշակոյթին ու լեզուին,
Պարտ է նաեւ Հաւատարիմ ըլլայ իր Հաւատքին:

Կան անձեր, որոնք կը թուին Հաւատարիմ չըլլալ.
Բայց այս ըմբռնումն ընդհանուրի, է շատ սխալ:
Ամէն մարդ իր խորքին գիտէ Հաւատարիմ ըլլալ.
Ընթացքով իր գուցէ այդ տպաւորութիւնը չտալ:

Անկասկած ամէն մարդ միշտ Հաւատարիմ է,
Կախեալ թէ այդ Հաւատարմութիւնը որո՞ւ է:
Ան անձը, որ միայն իր «Ես»ին Հաւատարիմ է,
Ուրիշ բանի Հաւատարիմ ըլլալու կարող չէ:

Եթէ Քրիստոսն է Հիմքը անհատին Հաւատքին,
Եւ Հասած գիտակցութեան բարձր մակարդակին,
Կարող է տեսնել միութիւնը ի մէջ բազմութիւն,
Հաւատարմութիւնն ալ կ'ըլլայ Հանդէպ բոլորին:

Գրուած է «Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել»*
Պարտ է ամէն անձ ալ իր ազատ կամքով զատել
Իր ճշմարիտ Էութիւնը՝ Քրիստոս, եւ զայն օրինակել
Քան թէ Հաւատարմութեամբ իր «Ես»ին ծառայել:

* - Մատթեոս 9:24



ԳԵՂԵՅԿՈՒԹԻՒՆԸ

Մարդ կը խորհի թե կեանքի նպատակը երկար ապրիլն է,
 Իսկ ճշմարտութիւնը՝ գեղեցկութեան արտայայտուիլն է,
 Երբ ընդհանուր ստեղծագործութիւնը զայն կը ցոլացնէ:
 Բացառիկ է մարդը, քանզի ան գնահատելու կարող է:

Բոլոր ստեղծագործութիւնը Աստուծային երգ մըն է,
 Որուն նպատակը գեղեցկութիւնը ի յայտ բերել է:
 Երկնականարը իր աստղերով, Աստուծոյ ձեռագործն է,
 Իսկ մարդն ալ գեղեցկութեան գագաթնակէտն է:

Մարդ կը վայելէ գեղեցկութիւնը բուսական աշխարհի,
 Ինչպէս նաեւ բազմանդամ կենդանական աշխարհի:
 Ան կարողութիւնը ունի որպէսզի ձգտի իրմէ գեղեցիկի,
 Ըլլալով ճանապարհը լրիւ յայտնութեան Քրիստոսի:

Միայն մարդն է, որ կարող է գիտակցիլ գեղեցկութեան,
 Եւ հետեւաբար գիտակցօրէն ծառայել բարեշրջման,
 Որ կարենայ կապ կապել հետն այդ ակին գեղեցկութեան,
 Եւ ինք միանայ Անոր՝ փորձառութեամբը հաղորդութեան:

Մարդ, ֆիզիքական, յուզական եւ մտայինի ազդեցութեամբ
 Հաւատարմով պատրանքին եւ կիրքերուն, եսասիրութեամբ
 Կը խեղաթիւրէ այդ գեղեցկութիւնը անգիտակցութեամբ
 Արգելք կը հանդիսանայ բարեշրջման՝ իր սատանայութեամբ

Ինչպէս մարմինը պէտք ունի հացի, ջուրի, օդի եւ լոյսի,
 Հոգին ալ պէտք ունի գեղեցկութեան, որպէսզի աճի,
 Գեղեցկութիւնը մարմնացումն է սիրոյ, որ ան արտայայտուի
 Գեղեցկութիւնը զօրութեան կեդրոն մըն է՝ օգտակար բոլորի

Ամէն անձ պարտ է բարձրացնել որակը իր գիտակցութեան
 Եւ կարողանայ կապ հաստատել հետն իր ճշմարիտ էութեան
 Որպէսզի իրմով ամենուրեք սիւնուի այդ լոյսը գեղեցկութեան
 Ու զօրութիւնը ծառայէ իր ներքին Քրիստոսի Յարութեան:





ԳԻՏԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Գիտակցութիւնը Աստուածային Էութիւնն է,
Որ ստեղծագործութեան մէջ թափանցած է,
Որով ամենափոքր մասնիկն ալ գիտակից է,
Հակառակ այն կարծիքի թէ գոյականը չէ:

Ամէն անձի գիտակցութիւնը կը յայտնուի
Գործառնութեամբը եւ միջոցաւ իր ուղեղի,
Աստուծոյ Հետ կապը այն արծաթեայ թելի
Ինչպէս գրուած է մէջ Հին Կտակարանի:

Շտորհիւ գիտակցութեան մարդ տեղեակ է,
Ան, որ Հինգ զգայարանքներով զգացած է,
Ու բոլոր յուզումները որ զինք կը գրաւէ
Եւ խորհուրդները որ զինք կը զբաղեցնէ:


Ան, Փառաց Լոյսն է որ կը կենդանացնէ
 Մեր ֆիզիքական մարմինը որ Հողէ է,
 Նաեւ զգացական մարմինը որ Նուրբ է,
 Ինչպէս իմացականը՝ որ խորհուրդ է:

Գիտակցութիւնը միշտ Հոն ներկայ է,
 Նոյնիսկ երբ մարմինը այլեւս մեռած է.
 Երբ մարմինը կը դադրի ծառայելէ,
 Յայտնութեան մակարդակն ալ ցած է:

Գիտակցութեան մակարդակը կը տարբերի.
 Կ'ըսուի թէ Հարիւր-ութը աստիճան ունի:
 Ինչպէս Հիւլէ մը բարձր մակարդակ չունի,
 Մարդու գիտակցութիւնը է անկէ աւելի:

Գիտակցութեան աստիճանը երբ բարձրանայ,
 Աստուածայայտնութիւնն ալ կ'իրականանայ:
 Ամէն անձի պարտականութիւնը պէտք է ըլլայ.
 Դառնալ այդ բարձր գիտակցութեան ծառայ:





ԻՐԵՐ ՇԵՏ ԵՐ ԿԵ ԶԵՄԱՆԵՆ ԵՈՒՆՅ ՔՈՇ ՄԵ ԽՈՍԵԼՈՒ

ԱՆԿԵՂԾ ԸՆԿԵՐԸ

Ան է սիրոյ լաւագոյն արտայայտութիւնը,
Քանզի է Աստուծոյ իննամակարութիւնը.
Գրաւելով Հանդերձ կու տայ ազատութիւնը,
Առանց վարանումի կը կամենայ լաւագոյնը:

Ան սրտով մտիկ կ'ընէ եւ ոչ միայն ականջով,
Անձնասէր չէ, այլ կը զբաղի միշտ Հոգալով,
Ան կը Հասկցուի փոխադարձ Հասկնալով,
Ան կ'իմանայ ու կը խօսի միշտ վստահելով:

Երբեմն լաւ է մութին մէջ ընկերոջ Հետ քալել,
Քան թէ առանձինն լոյսի մէջ ճամբորդել.
Քանզի երբ ձախողինք կը փորձէ մեզ օգնել,
Ան անկեղծ ու արդար է երբ կը ջանայ զօրել:

Ան կը յորդորէ մեզ միշտ արդարութեամբ,
Պատրաստ է օգնելու անձնազոհողութեամբ,
Կը պաշտպանէ բացարձակ քաջութեամբ,
Գաղափարները յարգելի են՝ ամբողջութեամբ:

Երանելի են անձերը ի մէջ ամուսնութեան,
Երբ ամէն բանէ առաջ ընկեր են յաւիտեան:
Որպէսզի անձը ենթակայ ըլլայ լաւ ընկերութեան,
Հարկ է որ ինքն ալ լաւ ընկեր ըլլայ Հանրութեան:



ԿԵՂԾԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Արտաքին յայտնի երեւոյթը կեղծաւորի
Չի համապատասխաներ իր խորհուրդի:
Կարող է խաբել թէ՛ ընկեր, թէ թշնամի,
Բայց երբեք իր Էութեան՝ Քրիստոսի:

Կեղծաւորութիւնը ծառայել է իր «Ես»ի
Անկալութիւնն է մի անձնական շահի:
Հոգ չէ թէ այդ շահը ըլլայ նիւթականի
Կամ բարոյապէս ինք ուրիշի լաւ երեւի:

Աս ուղղութեամբ յանցաւոր են նաեւ
Կառավարութիւններ, որ կ'ըսեն բարեւ
Եւ իրարու փոս կը փորեն դռանց ետեւ,
Անգէտ, թէ կը տեսնէ Աստուած ի վերեւ:

Առաջին Հերթին կը թուի ըլլալ յաջող
Բայց ապագային կը յայտնաբերէ դող
Երբ հարցը աւելի բարդ կ'ըլլայ քանդող
Զօրութիւն մը, որ ոչ ոք զսպել չէ կարող:

Ամէն անհատ ու ամէն կազմակերպութիւն
Պարտ է միշտ ցոյց տալ գործունէութիւն
Անկեղծօրէն եւ չզատէ խաբեբայութիւն
Որպէսզի պարգենն ալ ըլլայ յաջողութիւն:



ԻՆՉՈՒ

Ինչո՞ւ Աստուած մարդը ստեղծեց իր ներկայ ձեռով,
 Ինչո՞ւ պարգեւեց մարմին մը Հինգ զգայարանքներով
 Եւ երկու ոտք ու ձեռքեր եւ բերան մը շրթունքներով

Ինչո՞ւ մարդը օժտեց զգայնութեան կարողութիւնով
 Եւ իմացականութեամբ մը, որ զբաղի տրամաբանելով
 Եւ անոր նուիրեց անհատականութիւն մը մեծ յոյսով:

Աչքը տուաւ անոր, որ տեսնէ ստեղծագործութիւնը
 Եւ այդ ստեղծագործութեան մէջ ալ գեղեցկութիւնը
 Ու այդ գեղեցկութեամբ ճանչայ Աստուածութիւնը:

Ականջ մը՝ կարողութեամբ լսելու բոլոր ձայները
 Բայց մարդը իմանալով բոլոր ձայներու Հանած աղմուկը
 Նաեւ կարողանայ իմանալ լռութեան մեջէն Իր կանչը:

Քիթ մը տուաւ անոր, որպէսզի ան կարենայ Հոտոտել
 Սիրելու Համար ստեղծագործութիւնը, պէտք էր Համոզել
 Գարնան ծաղիկներուն բոյրը իբր օրինակ գործածել:

Համոտեսելու կարողութիւն մը, որպէսզի ան Հասկնայ
Անուշութիւնը կեանքին ու այդ պարգեւին փառք տայ
Բայց լեղին ալ միասին, որ ան գնահատելը գիտնայ:

Շօշափելու կարողութիւնը, որ իր միջավայրը զգայ
Բայց եթէ ան ուշիմ ըլլայ, նաեւ կարելի է որ գիտնայ
Թէ երբեմն Աստուծոյ Հպման է որ կ'արժանանայ:

Երկու ոտքերը տրուած են Համայն մարդկութեան
Որպէսզի կարողութիւնը ունենայ ճամբորդութեան
Եւ Հետապնդէ Հոգեւոր ճանապարհը փրկութեան:

Ինչպէս նաեւ, երկու թեւեր՝ ձեռքերով տասնամատեայ,
Որ են ճարպիկ ու ճարտար գործերուն մէջ առօրեայ
Միշտ պատրաստ Աստուծոյ կամքին Համար գործունեայ:

Երկու շրթոնք եւ լեզու մը որ կազմեն մի բերան
Արտայայտելու այն սուրբ խօսքը Աստուածութեան
Եւ ըսել աղօթքներ Աստուած փառաբանութեան:

Ինչո՞ւ տուաւ մարդուն յուզումն ու զգայնութիւնը.
Որպէսզի ան ունենայ սիրոյ զգացումի փորձառութիւնը,
Ցոլացնելով Աստուծոյ սէրը, սիրէ Համայն մարդկութիւնը:

Իսկ տուաւ իմացականութիւնը տրամաբանելու Համար
Որպէսզի սորվի կեանքի պատահարներէն Հեշտաբար
Եւ ստանայ Սուրբ Հոգիի իմաստութիւնը արժանաբար:

Մարդու անհատականութիւնը նուէր մըն էր Աստուծմէ
Որպէսզի ան գիտակցի, թէ կեանքը Աստուծոյ շնորհն է
Եւ այդ գիտակցութիւնն ալ Անոր ներկայութիւնն է:







ԾՆՈՂՔԻՍ

Ո՛հ մայրն իմ քնքուշիկ
Շտեմարան մը սիրոյ,
Էութինն մը անուշիկ,
Պատկերը Աստուծոյ:

Քու կարեկից ուգիով
Անման զոհողութեամբ
Ու խանդաղատանքով
Մտուցիր Համբերութեամբ:

Սորվեցուցիր ինձ աղօթել
Ու փառք Աստուծոյ ըսել,
Պատշաճ կենցաղ կերտել
Ու Աստուած միշտ պաշտել:

Ո՛հ Հայրն իմ սիրալիր
ՎաՀան մը ամբողթեան:
Քու ձայնովն քաղցրալիր
Փարոս մը ուղղութեան:

Սորվեցուցիր օրինակով
Պարկեշտ ըլլալ կենցաղով
Եւ զարգանալ ուսումով
Ու Աստուծոյ ծառայելով:

Հանգիստդ չխորհեցար
Երբ այս ափերը գաղթեցիր,
Դժուարութեան մասնուէցար
Գիտեմ թէ ինձ Համար ըրիր:

Ծնողքն իմ թանկագին,
Աստուածային տաճարներ:
Կը խոնարհիմ ձեր առջին,
Պաշտուէրու արժանիներ:
Վ.Ս.





ԱՅՏԱԾԻԿԻՍ



Շտորհալի դիմագիծդ երկնային փայլ մը ուներ,
Իսկ քաղցր ձայնդ երկնային անուշ նուագ մըն էր,
Բերանիդ ժպիտը ուրախութեան հրաւեր մըն էր,
Իսկ վարակիչ ինդուքդ ցաւերու դարման մըն էր:

Ներկայութիւնդ հմայական վիճակ մը կը ստեղծէր,
Հետեաբար քեզ չսիրել անկարելի կը թուէր,
Քու ներկայութիւնդ Աստուծոյ մեծ մէկ նուէրն էր,
Կեանքի ընկերդ ըլլալ ինծի համար պատիւ մըն էր:

Անընդհատ գուրգուրանքդ քու սիրոյդ փաստն էր,
Չանազան նիւթերու մասին հետդ խօսակցութիւններ
Ու սորված հոգեբանութիւնս ալ թանկագին նուէր,
Որ առօրեայ գործիս մէջ ալ ունեցաւ օգտակար դեր:

Գիտեմ՝ թէ դուն կեանքը ամէն բանէ շատ կը սիրէիր,
Ինչո՞ւ մեծ աճապարանքով այս աշխարհը թողուցիր,
Չէի՞ր գիտեր թէ դուն զիս մինակ պիտի ձգէիր,
Գիտեմ՝ թէ դիւրին չէր, դուն չուզելով է որ գացիր:

Որոշումը քուկդ չէր, երբ դուն հոգիդ աւանդեցիր,
Աստուածային կանչն էր, որուն կը հնազանդէիր,
Պէտք չէ մոռնանք թէ հոգին մի մասնիկն է Իր,
Այն Աստուածային Լոյսը, որ մեզի չի պատկանիր:

Բայց երբ Տէր պապան ըսաւ «առեալ ձեռն Եւայի,
Տուեալ ձեռն Ադամա» եղանք մի մարմին, մի հոգի,
Մահը իմ կէսս ալ առաւ տարաւ, զիս բաժնեց երկուքի,
Բայց քու կէսդ ալ հոս ձգեց, որ ինծի հետ ապրի:

Վ.Ս.

«ԱՌԱՔՈՏ ԼՈՒԲՈՅ»

Արեգակն արշալոյսի
Իր լեզակի շողերով
Ազդակ մըն է կեանքի
Արժնութեան հրաւերով:

Արեգակն առաւօտեան
Իր ջերմագին շողերով
Խթանը մարդկութեան
Արժնութեան մղելով:

Արեգակն երեկոյեան
Իր կարմրակ շողերով
Հրաժեշտը բնութեան
Միժողորմը խաւարելով:

Արեգակը գիշերուան
Լուսնի տիպար շողերով
Ցոլացումն է միայն
Անուղղակի ընթացքով:

Արեգակը ամէն մի օր
Իր զանազան շողերով
Մեր վրայ կ'ազդէ բոլոր
Իր անվերջ դրդումով:

Արեգակը ի՞նչ կ'ուզէ
Առտուան լոյսը տեանէ՞նք
Ապա թէ ոչ Ան կ'ուզէ
Լոյսին Առաւօտը տեանենք:

Վ.Ս.



ԿԱԹԻԼ ՄԸ ԱՐՑՈՒՆՔ

Աչքը հայելին է մարդկության,
Արցունքն ալ պատշաճօրէն
Ըլլայ նշան մը հանրութեան
Զգացումներու խոր վայրէն:

Արցունքը կը հոսի առատ
Երբ մարդ ըլլայ յուզումով լի,
Կամ զինք գրաւէ կարօտախտ,
Անօգ վիճակ անդարմանելի:

Արցունքը նաեւ նշան մըն է
Ծայրայեղ ուրախութեան,
Տխրութեան արդիւնք մըն է
Եւ թէ սաստիկ բարկութեան:

Ստացուած լաւ ու վատ լուրեր
Կը բանան աչքի ծորակներ,
Նոյնպէս անձկութեան օրեր
Եւ շատ մը հիւանդութիւններ:

Երբ աչքերը դառնան արեւին
Անյապաղ արցունքը կը հոսի:
Երբ անձը դառնայ Քրիստոսին
Կաթիլը կը դառնայ մարգրիտի:

Արցունքի ամէն մէկ կաթիլը
Ճմարիտ ապաշխարութեան,
Է ամենաթանկագին նուէրը
Նուիրուած Աստուածութեան:

Վ.Ս.



ՀԻՄՆԴԸ

Ո՛վ Աստուած իմ մարդասեր,
Դուն միշտ ողորմած ես Տէր,
Գիտես թէ կը տառապիմ,
Լսէ՛ ով Տէր աղերսանքն իմ:

Հիւանդանոցները թափառիլ
Բժիշկի խնամքի յանձնուիլ,
Քննութիւններն ալ անվերջ,
Բայց ցաւերու չկայ մի վերջ:

Վերջին յոյսս Դուն ես Տէր,
Ցաւերու դարմանն մը բեր,
Դեղ մը տուր որ բժշկուիմ,
Եւ տառապանքէս ազատիմ:

* * *

Ներե զիս Տէր, այս յիմարին,
 Իմ գործած աններեղի սխալին,
 Առ, տառապանքս պատշաճ է,
 Գործած մեղքիս Հետեւանքն է:


Երբ ես այդ մեղքը կը գործէի,
 Ես Քու կամքին մտիկ չըրի,
 Բայց Հիմա որ Հիւանդացայ,
 Իմ սխալին անդրադարձայ:

Եթէ Դուն յարմար նկատես,
 Եւ բան մը սորված եմ դասէս,
 Համբերութիւն տուր տոկալու,
 Կարողանամ պարտքս վճարելու:

Ամենակարող ես եւ ամենագէտ,
 Խոստումն պիտի պահեմ յաւետ,
 Ալեւս պիտի չի շեղիմ ճամբէդ,
 Եւ ինծի ցոյց տուած ճիշդ ուղիէդ:

* * *

Փառք Քեզ Տէր՝ Որդի Աստուծոյ,
 Առողջ եմ ես Հիմա շնորհիւդ Քոյ,
 Դուն դարման ես բոլոր ցաւերու,
 Բնաւ պիտի չմոռնամ Քեզ պաշտելու:
 Վ.Ս.





ԵՐԱԶՐ

Տեսայ շատ երկար մի երազ,
Կարծես կեանք մըն էր լման:
Ես ալ Հոն նուագեցի իմ սաղ,
Անհոգ թէ ուրիշներ իմանան:

Եղանակը շուտով ընթացաւ,
Բան մը կար որ ես չհասկեցայ.
Ժամանակը շուտ մը անցաւ,
Երբ ես Հոն նուագել սկսայ:

Իմաստուն մարդիկ ըսած են,
Թէ պէտք չէ անկէ տարուինք:
Քանի երազները պատրանք են,
Որով պէտք չէ նաեւ խաբուինք:

Հայրս ու մայրս ալ ինձ հետ
Նուագեցին տարբեր մի երգ:
Վերջանալով մեկնեցան յաւետ,
Կինս օգնեց՝ երկարեց իր ձեռք:

Ան ալ մասնակցեցաւ եղանակին,
Անգին ճոխացաւ այդ երգը մերին,
Հուտով վերջ տուաւ իր նուագին,
Ըսաւ. «Հնազանդիմ Հօրս կանչին»

Իսկ ես շարունակեցի իմ նուագին:
Չէ՞մ գիտեր թէ անդրադարձան,
Արժանացա՞ւ գնահատանքին՝
Ան բոլորին որ երգս իմացան:

Ես նուագեցի ու ես ալ իմացայ,
Բայց մեծ զարմանք պատճառեց,
Ես ներկայ ըլլալով զիս չտեսայ,
Աս ալ զիս շա՛տ շատ խանդարեց:

Պարտ եմ այս քունէն արթննալ,
Չեմ գիտեր ինչպէս զայն կատարել,
Եւ այս իմ երազին ալ վերջ տալ:
Պարտ եմ նուագիս վերջը սպասել:

Երազին վերջը կու գայ երկու ձեւով:
Մին է խորունկ քունի մէջ մտնելով,
Իսկ միւսն ալ քունէն արթննալով:
Պէտք է որոշեմ լաւ մը հասկնալով:

Եթէ վերջ տամ խորունկ քննով,
Պիտի չտեսնեմ ես զիս՝ երազողը:
Բայց եթէ վերջ տամ արթննալով,
Ես պիտի տեսնեմ զիս ստեղծողը:
Վ.Ս.



ՅՈՒՇԵՐ ԴՐԱԽՏԻ



Երբ ետ ակնարկ մը ըրի իմ կեանքին,
Շարժանկարի ժապավենի մը նման
Բազում պատահարներ վատ ու անգին
Անցան աչքիս առջևէն շարան-շարան:

Մեծ զարմանքի պատճառ մըն էր ինձի
Ուրախութեան զգացումը հանդէպ բոլորի,
Նաեւ դժուար ու վատ պաշերը կեանքի
Չնկատեցի նոյնիսկ մէկ րոպէն փոխելի:

Անտարակոյս շատ վատ պատահարներ
Խանգարած էին անդորրութիւնն իմ,
Բայց բոլորն ալ էին անհրաժեշտ պաշեր
Ձեռակերպելու անհատականութիւնն իմ:

Կեանքը դրախտ մըն է եթէ փափաքինք,
Բայց շատ դիւրաւ դժոխքի կը վերածենք
Եթէ խաւարամտութեամբ «Ես»ին փարինք,
Եւ մեր բոլոր օրերը «քունի» մէջ անցնենք:




Աշխարհը՝ Աստուծոյ ստեղծագործութիւնը
Կը ցոլացնէ աստուածային գեղեցկութիւնը,
Մարդուն ալ տուաւ Իր գիտակցութիւնը,
Որ ան Հոն տեսնէ սիրոյ արտայայտութիւնը:

Գրաւիչ երաժշտութեան մէջ զի՛նք իմանալ,
Ծաղիկի մը բոյրին մէջ ալ զի՛նք Հոտոտել,
Մօր մը գգուանքին մէջ Իր Հպումը զգալ,
Իսկ անուշ պտուղին մէջ ալ զի՛նք Համոտեսել:

Եթէ քունէն արթնանաք ու բանանք աչքերը
Պիտի տեսնենք, թէ՛ բնութիւն եւ թէ՛ մարդ,
Կը ներկայացնեն զանազան պատկերները
Իր գեղեցկութեան՝ որպէս աշխարհի զարդ:

Վ. Ս.





ԱՌ ՈՏՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Տէր իմ՝ դուռն երջանկութեան
Դուն ես բոլոր ցաւերու դարման.
Վերջակէսն ալ տխրութեան
Ակը անհուն ողորմութեան:

Տէր իմ՝ դուռն յաջողութեան
Արժանի ըրէ մարդկութեան.
Քու շնորհներուդ բազմազան
Յոյց տուր նշոյլ մ' ողորմութեան:

Տէր իմ՝ դուռն բժշկութեան
Պարգեւէ բժշկութիւն Հոգեկան.
Եթէ յարմար, նաեւ Ֆիզիքական
Կ'ապաւինինք Քու ողորմութեան:

Տէր իմ՝ դուռն խաղաղութեան
 Սուրբ սիրտ շնորհէ Հանրութեան.
 Զսպօւին խորհուրդներ բազմազան
 Անդրադառնալ Քու ողորմութեան:

Տէր իմ՝ դուռն սիրոյ անապական
 Բաժնէ սէրդ Համայն մարդկութեան.
 Միժողորմ մը եղբայրսիրութեան
 Է ապացոյցը Քու ողորմութեան:

Տէր իմ՝ դուռն գիտութեան
 Մակարդակ մը գիտակցութեան.
 Տուր Համայն մարդկութեան
 Որ գիտակցին Քու ողորմութեան:

Տէր իմ՝ Դուռն փրկութեան
 Ցոյց տուիր խաչին ճամբան.
 Եւ եսասիրութեան մահուան
 Կարօտ ենք Քու ողորմութեան:

Վ.Ս.



ՆՈՒՐԵԱԼԸ



Երեսանց Աստուածապաշտը
Զայն կը փնտռէ ամենուրեք,
Հշմարիտ Աստուածապաշտը
Զայն կը տեսնէ ամենուրեք:

Գաղտնիքը տեսնելու Զայն
Պաշուած է մեջ իր Էութեան,
Նայիլ աչքովն իր սրտին միայն
Միակ ճամբան է յաջողութեան:

Ինչպէ՛ս նայիլ սրտի աչքով:
Ան կը կարօտի նուիրումի,
Յարատեւութեան մը երկիւղով,
Եւ անխախտելի Հաւատքի:



Ամէն անձ պարտ է ճանչնալ
Հշմարտութիւնը իր Էութեան,
Ապա թէ ոչ ինչպէ՛ս գիտնալ
Էութիւնը Հշմարտութեան:

Դժուար օրեր անտարակոյս
Պիտի պատահին մեջ կեանքին,
Բայց պէտք չէ կորսնցնել յոյս
Մնալ Հաստատ մեջը Հաւատքին:

Տխուր օրերը մեզ կը փորձեն՝
Համբերութիւնը մեր Հաւատքին:
Փոքր տատամսումը արդէն
Կը փակէ աչքերը սրտին:

Վ.Ս.



ՎԵՐԱԴԱՐՁԸ

Մեծ երանությամբ տունն է մեկնեցայ
Արկածախնդրութեան մեծ յոյսով:
Չանաղան անձերու Հանդիպեցայ,
Ոմանք անտարբեր, ոմանք լի սիրով:

Տակաւին կը ճամբորդեմ այսօր.
Բոլոր այն անձերը, որոնք ճանչցայ
Ետ կը վերադառնան իրենց Հօր:
Իմ պտոյտն ալ պիտի վերջանայ:

Ճամբորդութիւնը շատ հաճելի է,
Բայց որքան ալ ան զուարթ ըլլայ
Տան Հանգիստն ալ բաձարիկ է:
Հոգնեցայ քալելէ երկար ճամբայ:


Երբ տունեն կը մեկնէի Հայրս ըսաւ.
«Չուարճացիր եւ մի վախճար բնաւ,
Ես քեզի Հետ պիտի ըլլամ Հարկաւ,
Թե՛ քու վատ օրերուդ, եւ թե՛ լաւ»:

Հօրս յորդորն էր. «Մի ըլլար բիրտ,
Եթէ կը փափաքիս երջանկութիւն,
Սիրէ բոլորին, նաեւ եղիր գթասիրտ
Եւ դուն ալ կը գտնես առողջութիւն»:

Բնաւ մի մոռնար Հօրդ տունը
Օր մը պիտի վերադառնաս ետ
Անհամբեր պիտի սպասեմ դուռը
Մինչեւ ողջագուրուիմ քեզի Հետ»:

Իր բոլոր Հաճելի պատահարներով
Երջանկութիւն է ճամբորդութիւնը:
Հօրս տունն ալ Իր սփոփիչ Հոգիով
Բոլորին կու տայ Իր երանութիւնը:
Վ.Ս.





ՏԵՍԻԼՔԸ

Տեսիլքը անձին Էութեան Հայելին է,
Եւ Անոր յատուկ մէկ յայտնութիւնն է:
Մեր Էնթագիտակցութեան ձայնն է,
Հշմարտութեան յայտնի ցոլացումն է:

Անձը Հշմարտութեան կ'առաջնորդէ,
Եւ միտքը կը բանայ եւ կը լուսաւորէ:
Տիեզերքի Հետ մեր կապը կը ցուցնէ,
Աստուծոյ մեզի Հետ ըլլալը կը յայտնէ:

Ան Աստուածապաշտութեան Հրաւեր մըն է,
Անձը որոշ ինքնաքննութեան կը մղէ,
Եւ անոր գործած սխալները կը յայտնէ:
Սիրտը անձին արցունքներովը կը մաքրէ:

Անձին ապաշխարութեան մէկ նշանն է,
Բարձր գիտակցութեան մակարդակն է,
Թագուն գիտութեան գիտակից կ'ընէ:
Եւ Աստուծոյ բացառիկ մէկ նուէրն է:

Վ.Ս.



ԿԵԱՆՔԸ ԵՒ ՄԱՀԸ

Ի՞նչ է նպատակը այս կեանքին:
Ապրի՞ն է եւ ըլլալ է միշտ երջանիկ:
Արդեօք չկա՞յ նպատակ մը վեհագին,
Որ արժանաւորէ կեանքը աշխարհիկ:

Մարդ ստեղծուած է կարողութեամբ
Տէր ըլլալու բարձր գիտակցութեան
Եւ զարթոնքին տուած արթնութեամբ
Ծառայել է Աստուածայայտնութեան:

Ահա՛ աս է այն ճշմարիտ կեանքը,
Որ ամէն մարդ յաճախ կը վիստէ:
Ան է յափտեանականութեան փառքը
Եւ երանութիւնը որ գերազանց է:

Իսկ մարդ իր խաւարամտութեամբ
Կը դատէ կարճ կեանք մը հաճոյքի
Վերջը ստակաւորուած մահուամբ
Որ ընթացք մըն է տառապանքի:

Ինք, որ է դարձած իր «Էս»ին գերի
Կը հպարտանայ իր կարողութեամբ
Եւ աշխարհիկ ցանկութիւններով լի
Կը հաւաքէ ինչքեր ազահոյթեամբ:

Ինք ցարդ չի գիտեր եւ չէ հասկցած,
Անոնք՝ պատճառը խաւարամտութեան
Են ճանապարհը մահուան՝ իր զատած:
Որուն վախն ալ կը հակասէ երջանկութեան:

Վ. Ս.



ՄԱՅՐ ՄԸ

Մայր մը՝

Աշխարհի վրայ Աստուծոյ ներկայութիւնը:

Մայր մը՝

Աստուածայայտնութեան միջոցը:

Մայր մը՝

Ծայրահեղ զոհողութեան տիպարը:

Մայր մը՝

Աստուածային սիրոյ շտեմարանը:

Մայր մը՝

Ներողամտութեան օրինակը:

Մայր մը՝

Համբերութեան գագաթնակետը:

Մայր մը՝

Յարատեւութեան արտայայտութիւնը:

Մայր մը՝

Անհատին առաջին վարդապետը:

Մայր մը՝

Աստուածային յատկութիւններու ամփոփումը:

Վ. Ս.



ՄԱՅՐ ՄԸ «Բ»

Մայր մը՝

Աստուծոյ բարձրագոյն ստեղծագործութիւնը:

Մայր մը՝

Աստուծոյ թանկագին նուէրը մանուկներուն:

Մայր մը՝

Անձնութեան օրինակը:

Մայր մը՝

Անուն մը սիրոյ, Հաւատքի եւ վստահութեան:

Մայր մը՝

Որուն ժպիտը ծաղկած բնութեան նման է:

Մայր մը՝

Որուն կաթիլ մը արցունքը դժոխքը կը բերէ:

Մայր մը՝

Երբ ուրախ է, Աստուած ալ ուրախ է:

Մայր մը՝

Երբ տխուր է, Աստուած ալ տխուր է:

Մայր մը՝

Երբ բարկանայ, Աստուած ալ բարկացած է:

Վ. Ս.



«ՍՈՒՐԲ ՍԻՐՏԸ»

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք,
 Զի նոքա զԱստուած տեսցեն»:
 Զսպուած խորհուրդներու մը արդիւնք
 Յիսուսի պատգամը լեռան քարոզէն:

Անձը երբ ինք կը կերտէ «սուրբ սիրտ»
 Միտքը կեդրոնացած չի խանգարուիր,
 Ինք Հաւատքով Հաստատա՝ չ'ըլլար խիրտ,
 Է միշտ պարկեշտ լի սիրով՝ անխտիր:

Կ'ըլլայ սիրոյ յատկութիւնները ցոլացնող,
 Միշտ կարեկից եւ գլխասիրտ բնութեամբ,
 Օգնելու միշտ պատրաստ ու ինքնագոհ,
 Քրիստոսի վրայ ունեցած վստահութեամբ:

Ճշմարիտ պաշտամունքն է վստահութիւնը
 Ինչպէս նաեւ սիրոյ արտայայտութիւնը,
 Երանելի է ան, որ ունի այդ յատկութիւնը
 Քանզի կը ստանայ Աստուծոյ ողորմութիւնը:
 Վ. Ս.

ՄԱՀՐ ՈՒ ՎԱԽՆԸ

Եթե աշխարհի վրայ կայ միայն մի բան,
Որ անխախտելի իրողութիւն մըն է ան,
ՄաՀն է անտարակոյս, օր մըն է ական
Աս աշխարհէն մեկնում մը վերջնական:

Ան նիւթ մըն է Համայն մարդկութեան,
Ենթարկուած է ան միշտ անտեսութեան,
Պատճառ միշտ վախի ու անձկութեան,
Ինչպէս լացի ու կոծի եւ տխրութեան:

Արդեօք մարդ ինչո՞ւ կը վախնայ մահէն:
Ան, տարուած իր խաւարամտութենէն,
Կը տառապի, քան թէ փախչի ցաւէն,
Որով ան չ'ուզէր բաժնուիլ աշխարհէն:

Մարդ Հոգի մը ունի զատ մարմինէն:
Ինք մաս մըն է առնուած Քրիստոսէն,
Որով անմահ է. ինչո՞ւ վախնայ մահէն
Մարմինը Հող կ'ըլլայ, եկած էր ան Հողէն:

Մարդն է Աստուծոյ մի արտայայտութիւնը,
Քանի Աստուած է միակ ճշմարտութիւնը:
Հետեւաբար, աշխարհ եւ մարդկութիւնը
Կը ներկայացնէ երազի մը գիտակցութիւնը:

Մահը, խորունկ քունով վերջ տալ է երազին:
Ուրիշ երազ մը երազել կարելի է անհատին,
Բայց եթէ անհատը կը ձգտի «Չարթօնք»ին,
Երազէն կ'արթննայ, կը գիտակցի ստեղծիչին:

Վ. Ս.





ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Բնութիւնը իր բոլոր երեսցիւթներով,
Ներառեալ մարդը իր ճակատագրով
Որ որոշուած է իր վարած կենցաղով
Գոյ ևն միայն օրէնքին ենթարկուելով:

Իսկ օրէնքներն ալ Աստուծոյ կամքով,
Անխախտելի իրենց արդէցութիւնով
Թէ՛ ֆիզիքականով, թէ՛ հոգեկանով,
Կը կառավարեն տիեզերքը ապահով:

Մարդն ալ օրէնքին դէմ գործելով,
Ս. Հոգիի դէմ մեղանշած ըլլալով,
Ճակատագրուած աններելի մեղքով,
Կ'ազատի միայն պարտքերը վճարելով:
Վ. Ս.



ՄԱՄ ՄԸ

Երանի կարենայի մոմ՝ մը ըլլալ
Եւ իր վառ ըյտովը պայծառանալ
Ու իր բոցին հետ ալ բարձրանալ
Եթերին մէջ լուծուելով անհետանալ:

Սպառէի կամաց կամաց հալելով,
Շուրջս անխափիր ըյս մը սփռելով
Եւ հոտաւետ բոցը մը արձակելով
Անպէտ ծովախա համար ներուելով:

Ի՞նչ օգուտ ունի մոմ՝ մը անվառ:
Ես ալ միշտ կը փնտռեմ պատճառ,
Որ զիս վառէ անձ մը անճառ,
Որով այս հարցով եմ՝ շատ տկար:

Կը յուսամ՝ Տիրոջս որ զիս վառէ:
Ուշիմ ըլլամ որ հովը զիս չմարէ:
Եթէ բոցիս պղպաղումը տկար է,
Յուսամ՝ օր մը փայլիլ կարելի է:


Ամէն մոմի բաղձանքն է վառիլ,
Եւ մեծ պայծառ բոցով մը հալիլ:
Պատրոյգին միշտ պէտք է նայիլ
Որ կարող ըլլայ մոմն ալ փայլիլ:

Վ. Ս.





ԽՈԿՈՒՄԸ




Մարզանք մը անտարակոյս
Խորհուրդներէ տալու խոյս
Ու տեսնելու Քրիստոսի լոյս,
Աստուած գտնելու միակ յոյս:

Զսպել մարդու միտքը կամշոտ,
Հատերու, արարք մը վարանոտ,
Միշտ յարատեւութեան կարօտ
Եւ անձը պէտք չէ ըլլայ վախկոտ:

Նպատակը պէտք է ըլլայ միակ
Գերազանցել ամէն ինչ հասարակ,
Կերտել, վճռականութեամբ մը յստակ,
Բարձր գիտակցութեան մակարդակ:

Միակ միջոցը ինքնաճանաչութեան
Համարտութիւնը անձին իր Էութեան,
Գիտակցիլ է Քրիստոսի ներկայութեան
Իր «տաճարին» մէջ Աստուածութեան:

Վ. Ս.



ԲԵԻԵՌՆԵՐԸ

Երկուլթեան վրայ կազմուած է բոլոր ստեղծագործութիւնը
Հետեւաբար ունի իր դրական եւ ժխտական ազդեցութիւնը
Թէ բնութիւն եւ թէ մարդկութիւն գիտեն այս իրողութիւնը
Անդորրութիւնն ալ է այս իրողութեան ընդունակութիւնը:

Մարդու անհատականութիւնը, զայն կը զատէ անասուններէ
Քանի մարդու այդ անհատականութիւնն ալ ստեղծուած է
Ան ալ դրական եւ ժխտական բեւեռացումի ենթակայ է
Ազատ կամք ունենալու համար այս բեւեռացումը կարելոր է:

Առանց ազատ կամքի ստեղծուածը գոյութիւն չ'ունենար
Որով ամէն ինչ ըստ Աստուծոյ կամքին պիտի ընթանար
Հետեւաբար Աստուծոյ մէջ լուծուելով պիտի անհետանար
Փրկուիլն ալ այդ իրականացնել է ազատօրէն կամարար:

Աս երկուլթիւնը մարդուն կու տայ այն կարողութիւնը
Իր կեանքի ընթացքին ընտրութեան մէջ զատողութիւնը
Իր բոլոր առած որոշումներուն համար ալ դատողութիւնը
Երանի ամէն անձ կարենար ըմբռնել ասոր կարելորութիւնը:

Անհատականութեան ժխտական բեւեռը անձին իր «Ես»ն է
Իսկ դրական բեւեռն ալ մեզ ներքին Քրիստոսին կը կապէ
Եթէ զատել եւ դատելը «Ես»էն կու գայ, եսասիրութիւն է
Իսկ եթէ Քրիստոսէն կու գայ Աստուածապաշտութիւն է:

Վ. Ս.

ԶԱՐԹՕՆՔԸ



Երբ մարդ քունէն կ'արթննայ
Գիտակցութիւնը կը բարձրանայ՝
Արթունութիւնը կը յափշտակէ
Չայն երազի ցած մակարդակէ:

Ան որ արթուն ըլլալ կը կոչենք,
Տարբեր երազի մը մէջ ենք մենք,
Եւ հոգեկան քունը կը շարունակէ
Միթէ այս քունէն արթննալ պէտք չէ:

Գիտակցութիւնը անհատին մէջ
Աստուծոյ ներկայութիւնն է անվերջ,
Աւելի բարձրին յափշտակուիլն ալ
Աստուածայայտնութեան միջոց է ըլլալ:

Ինչպէս մարդ իր ազատ կամքով
Չի կրնար քնանալ ինք ուղբով,
Չի կրնար արթննալ իր փափաքով,
Չարթօնքն ալ չ'ըլլար իր ջանքով:

Բայց մարդ կարող է պատրաստուիլ,
Հոգեւոր ճանապարհին հետեւիլ,
Յիսուսի խորհուրդներուն փարիլ,
Աստուածահաճոյ կենցաղով մը ապրիլ:

Չարթօնքը կու գայ Իր ժամանակին՝
Անտարակոյս ըստ Աստուծոյ կամքին,
Միականութիւնը կը յայտնուի անձին:
Աս է յափշտակութիւնը երկրորդ գալուստին:

Վ. Ս.



ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐ

Իրականացումները ցանկութեան,
Գաղտնի վայրէն զգայնութեան,
Հաճելի, անձին անհատականութեան,
Կու տան զգացումը **ՈՐՈՇՈՐՈՅԵԱՆ**:

Մարդու խաղաղութիւնը մտային,
Ներածին բնոյթէն իր հոգիին,
Հաճելի, ընդհանուր եութեան անձին,
Կու տայ **ԵՐՋԱՆԱՐՈՅԵԱՆ** մը ուժգին:

Բայց այն ատեն երբ ինք կը յաջողի
Հաղորդակցիլ հետ ներքին Քրիստոսի,
Ինք կ'ըլլայ Աստուծոյ Համար Հաճելի
Կը ստանայ **ԵՐՋԱՆԱՐՈՅԵԱՆ** մը հիմնալի:

Վ.Ս.



ԿԱՆԹԵՂԸ

Այս տիեզերքին մեջ անհուն
Աստուծոյ ըյսն է փայլուն
Որ կը փարատէ խաւարը խոր
Շտորհելով կեանք մը անոր

Աշխարհն է Իր կանթեղը
Ծովերուն ջուրերն ալ իւրը
Արեւն ալ վառ բոցը ուժգին
Կ'անհետացնէ խաւարը արտաքին

Երբ մարդ վառէ կանթեղը գիտակցութեան
«Վմանով» մը Աստուածապաշտութեան
Սիրոյ մէջ թաթխուած միտքն ալ պատրոյգը
Ինքնաճանաչումն ալ կ'ըլլայ փայլուն բոցը

Եւ երբ ան կ'անհետացնէ խաւարը ներքին
Փորձառութիւնը կ'ունենայ Աստուծոյ փառքին
Կ'անտեսէ ընդհանուր աշխարհը արտագին
Ու կը վայելէ երանութիւնը Աստուածային:

Վ. Ս.



ՄԻՏՔԸ



Մարդու մինքն է անպայման
Հրաշալիքը ստեղծագործութեան:
Ան մարմին մըն է աննիւթական
Ու անհրաժեշտ գործառնութեան:

Ան գոյութիւն մըն է խորհրդաւոր,
Թափանցած է մարմնին մէջ բոլոր,
Մինչ այդ անոր Համար են կարեւոր
Մարմնին երկու վայրերը գլխաւոր:


Երբ ան կը գործէ սրտի միջոցով
Մարդը կը լեցնէ զգացումներով,
Ինչպէս բազմաթիւ յուզումներով
Գրաւելով անձին էութիւնը շուտով:

Իսկ եթէ ան ուղեղով է որ գործէ,
Խորհուրդն է, որ յառաջ կը բերէ
Իսկ ասոնց ողորդման ալ ի բնականէ
Մարդը անընդհատ կը զբաղեցնէ:

Ան երբ իբր կառապան զատէ «Ես»-ը,
Ան կը գրաւէ անձին գիտակցութիւնը
Կարծես կը ծաղրէ Աստուածութիւնը,
Կը յառաջացնէ խաւարամտութիւնը:

Իսկ եթէ ան յարի ներքին Քրիստոսին,
Անձը կ' ուղղէ կատարելութեան ուղիին
Տալով գիտակցութիւն Աստուծային՝
Անձին մէջ յայտնութիւնը Քրիստոսին:

Վ. Ս.



ԵՐԿՈՒ ԱՆԻՆԵՐԸ

Երկուովթիւնը աշխարհի մի օրէնքն է:
Կեանքը երկու անիւով կառք մըն է,
Տառապանքը անոր անիւներէն մին է,
Իսկ միւս անիւն ալ երջանկովթիւնն է:

Մարդը ընդհանուր կեանքի ընթացքին
Անըդհատ կ'օրօրուի միջեւ երկուքին
Ինք անկարող զատելու անոնցմէ մին
Չի գտներ իր խաղաղովթիւնը անգին:

Երբ ան արթննայ խաւարամտովթենէն
Ու ձերբազատուի իր եասիրովթենէն
Ինք ալ կ'ըլլայ Աստուծոյ նուիրեալներէն
Մաքրուած եօթը մահացու մեղքերէն:

Իր կեանքի կառքն ալ կ'ընթանայ ուժքին
Հարգանքը կ'ըլլայ անոր անիւնէնէն մին
Իսկ հաւատքն ալ միւս անիւին կողքին
Ան կ'առաջնորդուի դէպի իր ստեղծիչին:
Վ. Ս.



ՎԱՐԴԱՊԵՏԸ



Երբ մանուկ էնք տակաւին պզտիկ,
Մեր ծնողքները իրենց օրինակով
Առաջինն էն կեանքի մէջ աշխարհիկ:
Պարտ էնք գնահատել զիրենք պաշտելով:

Երբ միտքը կը սկսի լրիւ կազմուիլ,
Դպրոցի ուսուցիչները անտարակոյս
Մեզ կը սորվեցնեն միտքով աճիլ:
Յարգուելու արժանի, կը սփրեն «ըյս»:

Երբ իմացականութիւնն ալ է կազմուած,
Ամէն ինչ կը թուի ըլլալ մի ուսուցիչ,
Կին, ամուսին, զաւակ, որոնց էնք վարժուած,
Նաեւ թշնամի, օտար կամ բարեկամ վարիչ:

Բնութիւնը իր բազմաթիւ երեւոյթներով
Լաւագոյն ուսուցիչն է համայն մարդկութեան,
Եթէ զայն դիտենք սորվելու նպատակով
Եւ «կեանք» էն կանգ առնենք մի քանի վայրկեան:

Հետեւաբար, ո՞վ է մեր ճշմարիտ ուսուցիչը:
Ան անձը, որ վերջ կու տայ բոլոր դժուարութեան
Եւ կ'անհետացնէ անձկութիւնը, վախը ու խուճապը.
Ան անձը, որ ցոյց կու տայ ուղին կատարելութեան:

Ամէն անձ ինք կը զատէ իր ազատ կամքով
Իր վարդապետը եւ կը խոնհարի անոր առջին,
Իսկ եթէ յանձնուի իր էութեամբ, իր «Ես»ը մոռնալով,
Կը հետեւի վարդապետութեան Քրիստոսի՝ իր արարչին:

Վ. Ս.

ՄԱՂԹ-ԱՆՔՆ ԻՄ



Աստուած իմ ողորմած եւ մարդասէր,
Առատաձեռն ու միշտ տոռող ուզողին.
Տուր ինձ իմաստութիւն ու առատ սէր,
Որ հետապնդեմ կատարելութեան ուղին:

Երաժշտութեան մէջ յայտնէ զօրութիւնդ,
Որպէսզի նոր երգ մը երգեմ պաշտամունքի
Սիրելով ու ինսամելով ստեղծագործութիւնդ
Եւ աս ըլլայ արտայայտութիւնս Հաւատքի:

Բանն Աստուծոյ, փչէ Քու Հոլն զօրաւոր,
Որ յափշտակէ սիրան իմ ու զայն օրօրէ.
Ան ալ արբեցած, միշտ նուագէ ամէն օր
Ու Քեզ Համար տենջանքի երգեր յօրինէ:

Իմ երգած այս նոր երգը թող Քեզ գրաւէ,
Քեզմէ Հեռու, փոթորիկներու չենթարկուիմ,
Քու ներկայութիւնդ դժոխքին կրակը մարէ
Եւ բոլոր Էութիւնովս ես Քեզի յանձնուիմ:

Քեզի Հանդէպ սերն իմ ամենեւին չնուաղի
Մնացեալ կեանքս ապրիմ Քու դրան սեմին,
Իսկ երբ իրականանայ փափաքս վերադարձի,
Հոգիս աւանդեմ դարձեալ Քու դրան սեմին:

Երկինքի աստղերը փայլուն՝ աչքերդ են գրաւիչ,
Ծաղիկներուն բոյրն ալ՝ ներկայութեանդ փաստը
Առանց Քեզի գոյատեւէլն ալ է միշտ վրդովիչ:
Սիրահարիս ծոցին մէջ վերջանայ իմ այս կեանքը:

Վ. Ս.



ՀԱՒԱՏՔԸ

Հաւատքը արդիւնքն է սիրոյ
Ու յոյսի Համար ալ պիտոյ:
Ան կ'ապաւինի Համբերութեան
Ինչպէս նաեւ յարատեւութեան:


Հետեւանքն է Հաւատարմութեան
Ու նաեւ յարգանքի մը անվարան:
Ան կը յայտնուի ծառայութեամբ
Անձին մէջ ինքնազոհողութեամբ:

Հաւատքը տարբերական չէ.
Չայն աստիճանաւորել կարելի չէ,
Որով Հաւատքը կամ կայ, կամ չկայ.
Իսկ եթէ կայ, երջանկութիւն կուտայ:

Երկու Հոգիներու միջեւ եղած կապը
Որուն կորիզը կը կազմէ Հաւատքը
Սերս վստահութեամբ մը անթարշամ
Այդ միութիւնը կ'ըլլայ անթաւամ:

Դժուար է վստահութիւն մը շահիլ
Ու «Հաւատքի» արժանի ապրիլ:
Հաւատքը Հայելին է մեր կենցաղին
Կենցաղն ալ Հայելին մեր Հաւատքին:

Վ. Ս.



ԵՆԹԱԿԱՆ

*Ո՞վ է այս խորհուրդաւոր ենթական,
Գիտակից աշխարհի բազմազանութեան
Ու ամէն ինչի ուր է առարկայական,
Ինչպէս նաեւ մարմնին Ֆիզիքական:*

*Գիտակից է ան բոլոր խորհուրդներուն,
Ինչպէս նաեւ յուզում ու զգացումներուն,
Զատելու ու դատելու որոշումներուն,
Նաեւ անհատականութեանն ամենուն:*

*Ան է աղբիւրը անհուն գիտակցութեան,
Ան աշխարհի «Լոյս»-ն է յաւիտենական,
Ան կեանքի ակն է ստեղծագործութեան:
Իրեն համար ամէն ինչ է առարկայական:*

*Ան թաղնուած է մէջ ամէն ինչի ու անձի,
Աներեւոյթ է բայց կ'ընէ բոլորը երեւելի,
Քրիստոսի ներկայութիւնն է մէջ ամէն էակի,
Ու ճշմարիտ էութիւնը ամէն մի անհատի:
Վ.Ս.*



ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Հայրն իմ՝ Երկնաւոր,
Որդի մըն եմ՝ յանցաւոր:

Պաշտօնիչ ամենակարող,
Եմ օգնութեանդ կարօտող:

Տեր իմներող ես մանաւանդ,
Ծառայ մըն եմ՝ անհնազանդ:

Սիրէ զիս էութեամբդ բոլոր,
Որով սիրաւորուած եմ՝ Անոր:

Գիտակից ես Դուն ինծի,
Գիտցուելու չեմ՝ արժանի:

Տեր եւ տիրական ամէն ինչի,
Կը պատկանիմ ես Քեզի:

Կապն ես դուն մէջ բոլորին,
Կապուելու եմ՝ Քու չուանին:

Հոգին ես Դուն տաճարին,
Տաճարը մէջ իմ՝ մարմնին:

Ներկայութիւնդ Հաճոյալի,
Վայելեմ՝ Քեզ անբաւելի:

Վ.Ս.



Ի Խորոճ Մոտ Խօսք Ընդ Աստուծոյ



Հայր իմ երկնաւոր, Բնութիւնը ստեղծեցիր Իմաստութեամբ.
Իմաստութեանդ Հայրութեամբ եւ Բնութեանդ մայրութեամբ,
Ծնունդ տուիր աշխարհի Քու Աստուածային յղութեամբ
Ու անձնապէս մարմնացար Դուն Հոն մանկական ծննդեամբ:

Դուն պարգեւեցիր մի մանուկին անհատականութիւնն իմ,
Որպէսզի Քու ներկայութեանդ ու շնորհներուդ գիտակցիմ՝
Ու ծառայեմ յայտնութեանդ օրինակելի կենցաղովս իմ,
Սփռելով ամենուրեք այն լոյսը զետեղուած մէջ Հոգւոյն իմ:

Մանկութեանս օրերուն զիս խնամեցիր մօրս կերպարանքով,
Երբ դեռ տկար էի պաշտպանեցիր զիս սիրալիր Հօրս կերպով:
Իբր գպրոցի ուսուցիչներս դաստիարակեցիր զիս սորվեցնելով,
Ուղղեցիր զիս Ս. Խորանիդ, որ ուրախանամ Քեզ ծառայելով:

Ս. Խորանին վրայ Դուն իջար մէջ այդ անապական Ս. Սկիւին
Ու յիշեցուցիր, Քեզ ճանչնալու նպատակը այս մահացու կեանքին:
Աչք տուիր ինձ, որպէսզի Քեզ տեսնեմ ամենուրեք, բայց փակ էին,
Ականջ տուիր ինձ, որ իմանամ Քու կանչը, բայց կարծես խուլ էին:

Դուն չքեցիր զիս, յաջողութիւն պարգեւեցիր, որ բժիշկ ըլլամ,
Ներկայացար ինձի իբր Հիւանդ, որպէսզի ես գժճասիրտ ըլլամ,
Ցոյց տուիր տառապանքն ու մահը, որպէսզի կեանքը գնահատող ըլլամ՝
Եւ նաեւ գիտնամ առողջութեան արժէքը եւ զայն պղծող չըլլամ:

Գործականօրէն սորվեցուցիր, թէ այս կեանքը չէ մնայուն ապրելու:
Փորձառութիւնը տուիր Հանդիպելու անձնասէր ու վատ անձերու
Ցոյց տալու Համար վախճանը, եթէ ապրինք առանց Քեզ ապաւինելու:
Փորձեցիր անընդհատ, որպէսզի սորվինք ապրիլ առանց փորձուելու:

Պատշաճ ժամանակին, իբր կինս սիրավիր, ամուսնացար ինձի Հետ,
Որպեսզի շարունակես Քու գուրգուրանքդ անյապաղ ու յաւէս
Ու սորվեցուցիր այս ծառայիդ գոհողութիւնը նաեւ սիրոյ Հետ:
Երջանկութեան այս փոքր նմոյշով, Հասկցայ երանութիւնը Քեզ Հետ:

Երբ ես խոտորած շատ կապուեցայ Քու այդ պատկերիդ քնքուշիկ,
Մոռնալով թէ Դուն ես նաեւ այն միւս բոլոր պատկերները գեղեցիկ.
Վերցուցիր այդ գրաւիչ պատկերդ Քու իմ մերձակայ վայրիկ:
Տնեցեցիր զիս իմ խորքէն, որպէսզի բացուին ականջք իմ ու աչիկ:

Բայց չքեցիր զիս ճակատագրին՝ մինակ, անտէր ու թափառական,
Ընկերներու անուան տակ, շարունակեցիր ինձամբդ կարեկցական:
Չինացեցիր այս խղճալի ծառայիդ գուրգուրանքդ շարունակական,
Որպէսզի գիտնամ, թէ միայն-ու-միայն Դուն ես յաւերժական:

Արթուն եմ ես Հիմա, ու գիտեմ, թէ իմ բոլոր կեանքի ընթացքին,
Դուն էիր միայն ինձամոլ եւ պահպանիչ իմ՝ նետած ամէն մի քայլին:
Փորձառութիւններով սորվեցուցիր ինձ նպատակը այս կեանքին,
Որպէսզի այլեւս չշուարիմ իմ ճամբաս, մնացեալ կարճ ժամանակին:

Խաւարամտութեանս Հետեւանք եթէ շեղեցայ Քու ցոյց տուած ուղին,
Խոտորեցայ Աստուածաճաճոյ կենցաղէն ու չքաղցի Քու ճամբէն,
Կ'ապաւինիմ Քու սիրոյդ ու կը յուսամ, թէ Քու ողորմութենէն
Մասնիկ մ'ալ ինձ բաժին Հանես, որ օգտուիմ Քու ներողամտութենէն:


Երբոր Դուն յարմար նկատես թողուլ այս մարմինը մահկանացու,
Պատրաստ եմ մեռնելու ու մոռնալու բոլոր կեանք մը փորձառու:
Իսկ եթէ ներես այս յիմարին, որ չգիտցաւ կանուխէն արթննալու,
Համարձակութիւնը պիտի ունենամ Հետեւեալը Քեզմէ ինդրելու:

Կ'աղաչեմ եւ կը ինդրեմ, կ'աղօթեմ ու կ'աղերսեմ մի փափաքն իմ,
Չփակած աչքերս այս աշխարհի, իրականացուր այս տենջանքն իմ,
Տեսնել Քեզ՝ Քու Փառքովն բոլոր, որ է ձգմարտութիւնը Հոգւոյն իմ
Եւ արածնէ, որ Քեզ միշտ պաշտեմ ու միայն Քեզ յափտեան յիշեմ:

Վ.Ս.







ԵՌԲՆՈՒՄ ԷՄՐԷ

ԳԻՏՈՒԹԻՒՆ՝ ԳԻՏԱՆԱԼ Է.
ՃՇԱՄՐԻՏ ԳԻՏՈՒԹԻՒՆ՝
ԻՆՔՆԱԳԻՏԱՆԱԼ Է
ԵՐԷ ՄԱՐԴ ԻՆՔՉԻՆՔ ՉԳԻՏԱՆԱԼ
ԳԻՏՉԱԾԾԸ ԻՆՉ ՕԳՈՒՏ
Կ՛ՈՒՆԵՆԱԼ:



(ՍԷՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ)

ՍԷՐԴ զԻս խլեց յոյնիսկ ինձմէ
Յանկամ ըլլալ անբաժան քեզմէ
Օր ու գիշեր սիրոյդ համար կու լամ
Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Ո՛չ կեանքն է ինձ համար գրաւիչ
Ոչ ալ մահը ամենեւին վրոպովիչ
Միայն քո սէրն է մխիթարիչ
Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Թէ որ զիս մեռցնեն
Հետքս անգամ անհետացնեն
Վերադարձի կոչ իսկ գայ հողէն
Դարձեալ միայն քեզ է որ կը տենչամ:

Սիրահարուած Եռնուա կը կոչուիմ
Ամէն մի օր կը բորբոքի կրակն իմ
Երկրի վրայ, կամ երկինք գտնուիմ
Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

(Ազատ թարգմանութիւն Վ. Ս.)



ՀՐԱԺԵՇՏԸ

Երբ ես հոսկե այլեւս մեկնիմ
Աս ըլլայ Հրաժեշտի խօսքն իմ

Ան որ տեսայ, է Անգերազանցելին
Համոտեսցի թափուն Հիվթը այս ծաղիկին
Որ ծլած է մէջ Լոյսի ուլկիանոսին
Արժանացայ այս Աստուածային օրհնութիւնին
Աս ըլլայ խօսքը իմ Հրաժեշտին:

Այս բեմադրութեան մէջ իր անհամար ձեւերով
Ես ալ մանաւկեցայ յատուկ խաղս խաղալով
Եւ հրճուեցայ այն Անտեսանելին տեսնելով
Եւ ամբողջ մարմինս իր բոլոր անդամներով
Սարսուռ մը զգաց Անդաշէլին հպումով:

Եթէ գալիք է, թող Հիմա գայ վերջն իմ
Եւ աս ըլլայ Հրաժեշտի խօսքն իմ:

Թափոր

(Ազատ թարգմանութիւն Վ. Ս.)



ՄԻԱՅՆ ՄԷԿ ՎԱՅՐԿԵԱՆ

*Ես ունիմ միայն մէկ վայրկեան
Միայն վաթսուն երկվայրկեան*

*Բռնադատուած է, կարելի չէ մերժել
Ես չփնտուեցի ու չուզեցի զայն զատել
Բայց պարտ եմ զայն օգտագործել*

*Ես պիտի տառապիմ եթէ կորսնցնեմ զայն
Հաշիւ պետք է տամ եթէ ես եղծեմ զայն
Եղածն ու չեղածն է փոքր մի վայրկեան
Բայց անոր մէջ ներկան է յաւիտենական*

ԲԺՀ. Բենիամին Է. Մէյս
(Dr. Benjamin E. Mays)

(Ազատ թարգմանութիւն Վ. Ս.)





ՄԱՅՐՍ

Երբ ձայնակցեցայ ձայնին աշխարհի
Աչքերդ բացիր ժպիտով բարի
Ցաւդ մեղմացաւ նայեցար ինձի,
Յուշիկ սահեցաւ կաթիլն արցունքի:

Բարի իղձ, աղօթք ինձ շնչացիր,
Առողջ երջանիկ կեանք մը մաղթեցիր,
Քարին թող չգայ, Աստուած պաշտպանէ
Վիշտ ու ցաւ երբե՛ք-երբե՛ք չտեսնէ:

Լուսազարդ եղար երբ Դուն մայրացար,
Սէր գուրգուրանքով շա՛տ առատացար.
Լուսաշաւիղով իմ խորքս անցար,
Նրբաշունչ հեւքով ինձ հետ ձուլուեցար:

Նայեցայ խորո՛ւնկ իսկոյն հասկցայ՝
Թէ սրտիդ զարկէն ես ճիշդ երկնեցայ
Ու նաեւ վճիտ քու խղճիդ ձայնէն
Եւ երազներուդ անմեղ գումարէն:

Այդ է երեւի, որ մինչեւ հիմա
Իմ մէջն է մայրս իր հոգւով առկայ.
Դասեր ես տեսայ որքա՛ն շա՛տ ու շա՛տ
Բայց մօրս դասն էր՝ աննման խրատ:

Մօրս Հայեացքն էր, որ եղաւ միակ՝
 Զինջ-վերերկրային, անեղծ-սպիտակ,
 Նրբաշունչ-քնքուշ մեղմ կոպերուն տակ
 Անեղր-վճիտ, անչափ անյատակ:

Ճերմակ շուքիդ տակ՝ ես պլպլացի
 Ուրախ խայտացի, ճիշդը փնտուեցի,
 Չարէն Հեռացայ, վատը ատեցի,
 Միշտ բարի ու լաւ մարդկանց սիրեցի:

Ե՛ւ մայրաբարոյ Հայեացքիդ ներքոյ,
 Մեծ Համբերութեամբ ամէն երեկոյ,
 Զինջ բարութիւնդ նշխարի ձեւով
 Կը բաշխէիր մեզ քնքշանքի թեւով:

Հաշիւը կու տամ առաջին Հերթին,
 Ու կը Հաւատամ մօրս Հայեացքին,
 Իր ճերմակ անմեղ, անբիծ նայուածքին,
 Մեղմ-գորովագութ՝ խանդաղատանքին:

Որքա՛ն ծով վշտեր տեսած էր մայրս,
 Խո՛ր ընդերքին մէջ պահած էր մայրս,
 Որքա՛ն տառապած ապրած էր մայրս,
 Բազմ՝ ւմ ցաւերով վառուած էր մայրս:

Երկնի աստղերէն վառ ճառագող էր,
 Խնկածաղկի պէս աղօթքի տող էր,
 Երկինքէն իջնող փաթիլներուն պէս
 Պարզ ու անմեղ էր մայրս լուսերես:

Ախ մայրս ինչո՞ւ այդպէս թողուցիր,
Սիրուն աչքերդ ինչո՞ւ փակեցիր.
Բոլորիս տրտումսերս Հաւաքեցիր
Բաժանումով այս մեզ մորմոքեցիր:

Վիշտ ու ցաւերով՝ դեղ ու դեղորայք
Կ'ապաքինէիր դեղերէն արագ.
Ամէն մէկ ցաւիս կ'ուզէիր տոկամ
Քնքո՞ւշ կ'ըսէիր՝ Հիմա ես կու գամ:

Հիմա երբ չկաս մայրն իմ անմամն,
Երբ դո՞ւն էիր միշտ ցաւերուս դարման.
Այս ծանր բեռս որո՞ւն պէտք է տամ,
Մահացու ցաւիս որո՞ւն ես երթամ:

Լուսահոգի մայր ես գիտեմ ո՛ր ար ես,
Հոգեղէն կերպով վերերկրային ես.
Լուսապսակով մորմոքող վերք ես,
Աստուածահաճոյ սաղմոսաւերդ ես:

Ննջ՛ Դուն Հանգիստ, Հողը թող թեթեւ
Աճինդ ծածկէ, թող ծագի արեւ
Մեղմաշունչ զեփիւս ու գարնան անձրեւ
Ծաղիկներ աճին, մասունքիդ վերեւ:

Չաւակդ՝
Տոբթ. Ղազար Պօղոսեան





ՄԱՀՈՒԱՆ ԿԱՐՕՏԸ

Ով իմ անձս, ինչո՞ւ էս վրդոված
Մօտ է օրը երբ պիտի ոչնչանաս:

Ցաւերդ վերջանան պիտի,
Սիրտդ ալ հանգչի պիտի:
Մարմինդ դաղուի պիտի,
Ու անունդ ալ մոռցուի,

Բայց հոգիդ պիտի թռչի
Ու աստղդ ալ պիտի փայլի:

Սօլօ Նիկոսեան
Նոյեմբեր 2018
Թորոնթօ, Գանատա

ԵՌԷ

Եթե կրնաս պահել գլուխդ առանձին,
 Երբ խուճապի մեջ է չորս դիպե՛լ ամեն մարդ,
 Եթե կրնաս վստահ ըլլալ քու անձին,
 Երբ ուրիշներ կը կասկածին քու վրադ,
 Եթե կրնաս միշտ սպասել անձանձիւր,
 Կամ չստել շրջապատուած սուտերով,
 Ատողներու միջեւ մնալ սիրալիր,
 Եթե կրնաս ըլլալ բարի, բայց ուժո՛ւ վ։

Եթե կրնաս դուն երազել եւ սակայն
 Չըլլալ գերին երազներուդ գերիշխող,
 Յաղթանակէն ետք Հանդիպիլ պարտութեան
 Եւ նո՛յն ձեռով ընդունիլ զոյգն այդ խաբող,
 Եթե կրնաս լսել քու խօսքդ վճիտ
 Չարափոխուած յիմարներու ծուղակի
 Ու խորտակուած տեսնել մեծ երկը կեանքիդ,
 Բայց վերստին զայն շինելու գաս ծոնկի։

Եթե կրնաս շահը Հազար ճիգերու
 Մէկ Հարուածով յանձնել բախտի սեղանին
 Եւ անարտունջ, առանց երբեք ողբալու
 Վերսկսիլ ծայրէն ամէն ինչ կրկին,
 Եթե կրնաս սիրտ ու ջիւղեր ու մկան
 Մաշումէն ետք նորէն լարել անդադար
 Եւ դիմանալ երբ մեռած է ամէն բան,
 Բացի կամքէն, որ կը մնայ մեջդ վառ։

Եթե կրնաս արքաներու Հետ՝ պարզուկ,
 Ամբոխին մէջ՝ առաքինի ըլլալ միշտ,
 Եթե թաղես կրքի բոպէն վաղանցուկ,
 Եթե մարդիկ անզօր են քեզ առթել վիշտ
 Եւ ամէնուն կու տաս արժէքն իր արդար,
 Եթե սիրես, բայց սիրոյ խենթ չդառնաս.
 Քո՛ւ ւրդ է Երկիրն ու իր գանձերն անհամար
 Եւ աւելին՝ այն ատեն Մա՛րդ ես, տղաս։

Բ. Քիփլինկ
 Թարգմ. Մուշեղ Իշխան



ԱՆՄԱՐ ՍԷՐ

Քեզ չսիրե՛լ


Գեհէն կորե՛լ

Ու կրակով հոգին փորե՛լ:

Քեզի սիրե՛լ

Դրախտ երթալ

Ու վարդերով քնանալ:



ԻՔՐ ԶԱՐԴ

Օրէ օր

ճրագ առ,

Պաշէ Վառ՝

ՄՏՔԻԴ յԱՐ,

ԼՈՒՍԱՏՈՒ,

ՆՈՐԷԱ ԱՐ

ԿՐԱԿ ՏԱՐ

ԱՆԱՊԱՌ՝

ՍՐՏԻԴ լԱՐ,

ՅՈՒՍԱՏՈՒ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ԱՍՏՈՒԱԾ ԻՄ

Միող սերմ ջաշեծիր,
Հող ջերմ ուսեծիր,
Հողին շոխշո փշելով՝
Հոգի կեանքի կաթեծիր,

Եւ Արեւի լոխին յարմաւս յաղեծաւ,
Եւ իմ հոգին Հոգոյ ծողով շաղեծաւ,
Իմ արեւի սերն ու բոշը, սրող հոշը՝
Ամուերի մէջ, որոյն կայծակ սաղեծաւ:

Կոմիտաս Կարոյան



ԿՈՅՐԸ
ՏԷ՛ր Իմ,
ՍԷ՛ր Իմ,
ԶարԿԻՆ ՔԱՋՔԵՐ՝
ԿՈՒՐԱԾՐԻ՛Ն Իմ ԱՋՔԵՐ,
ԼՈ՛ՂՍ ՏՈՒՐ,
ՅՈ՛ՂՍ ՏՈՒՐ,
Ասա՛ն ապա՛ն
Իմ ԱՋԵՐՈՒԻՆ ԽԱՎԷ:
ԿՈՄԻՏԱ ՎԵՐԴԱՊԵՏ



ԱՂԵՐՍ

ԿԱ՛Յ, ՏԷ՛ր, ՏԷ՛ր ԻԱ,

ԲԱ՛Յ, ՏԷ՛ր, ԱԷ՛ր ԻԱ,

ԶԱՐԿԻՆ ԴԵԿԵՐ

ԻԱ ԹԵԿԵՐ,

ՏՈ՛ՒՐ, ՏԷՐ,

ՀՈ՛ՒՐ ՏԷՐ,

ՈՐՊԷԱ ԽՈՏԵՐ

ԷԼ ՉԴՈՊԱՆ

ԻԱ ՈՏԵՐ...

ԿՈՄԻՏԱՆ ՎԱՐՊԱՊԵՏ

ՔՈՒՆԱԶՈՒՄ

Եւ ա՛յս գիշեր, քո երազում, տեսել ես, որ ես ու դու
Երես-երես ճանաչել ենք սիրոյ ծովում իրարու...

Քո սուրբ սէրը սար է դառել
Դալարագեղ, երկնածրար ու բեղուն,
Գլխիդ վերը ամպ է շարել
Գալարաճեղ, կամարակապ ու զեղուն:
Սարի շողէն, ամպի քողէն
Մենաւորի ոգին ծնել, դեգերել,
Ձեռին մի բոյս՝ կանաչ ու կոյս՝
Խորհրդաւոր ձորէն քաղել ու բերել:
Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել
Ամպի տակին արեւծագին շունչ առել,
Ջրի մոտին, կանաչ խոտին՝
Գլխիդ վերեւ ծիրան-գօտին փունչ արել:

ՃԱՆԱԴԱՐՀ

Բարակ ուղին սողալով,
Ոտի տակին դողալով,
Ճամփի ծայրին բուսել է
Կեանքի ծառը շողալով:
Ի՛նչ լայն սիրտ է, որ ունի
Այս ճանապարհն Անհունի...
Մարդու, բոյսի, գազանի
Եւ թեւաւոր թռչունի:

ՓՇՈՒՐ ՄԸ

Մտի՛ր խորը,
Գտիր նորը,
Վան՛է՛ հինը,
Բան՛է՛ մինը:

ՀՈՎ - ՍԷՐ

Նուրբ հովի պէս լարերով
Սուրբ ծովի պէս պարելով,
Սէրդ սրտում պահեցիր,
Սրտիս խորքում գահեցիր:
Աշունն եկաւ ծառին, տարին հեւելով
Անձրեւ թելեր փոշի-փոշի թեւելով,
Պտուկը ճոխ՝ առին տարին
Տերեւները կանաչ-ճանաչ պեղելով:



ՀՈՒՄԱԿ ԲԱՆՔ

**«ԵՍ ԷՈՒԹԻՒՆԴ ԵՒ ԱԿԻՉՔՆ ԵՄ ԲՈՒ ՎԱՆՃԱՆԻԴ
ԻՄ ԱԷՋՆ Է, ՈՐ ԴՈՒՆ ԻՆՔԴ՝ ԿԵԱՆՔԷՂ ԵՏՈՅ ՊԻՏԻ
ԱՊՐԻԱ:»**

Վերեւի տողերը ցեղասպանութեան եօթանասուն-ամեակի առիթով Հրապարակ Հանուած յուշամետաղի մը վրայ փորագրուած էր: Հոս տեղագրեցի, որովհետեւ ան կ'արտայայտէր այն բացարձակ իրողութիւնը, որ ջանացի ներկայացնել «Ալենցաղաղոյս»ի էջերուն մէջ:

Աղօթարար եմ Աստուծոյ, որպէսզի Իր անհուն ողորմութեամբ, բոլորիս պարգեւէ գիտակցութեան մակարդակ մը՝ Հասկնալու ճանապարհը չճմարտութեան եւ տայ փափաք եւ կարողութիւն կերտելու այդ Աստուածահաճոյ կենցաղը, իրականացնելու Համար Իր յայտնութիւնը՝ մեր միջոցով: Մեր աղօթքով պէտք է ցուցաբերենք զայն իրականացնելու վճռականութիւնը եւ ջանքը: Աղօթքը խնդրել եւ սպասել չէ: Անգլերէն ասացուածքը կ'ըսէ «God helps those, who help themselves» (Աստուած կ'օգնէ անոնց, որոնք իրենք իրենց կ'օգնեն): Աստուծոյ շնորհները անընդհատ կը տեղան՝ բոլորիս Համար: Մենք ենք, որ կը խափանենք անոնց ներխուժումը մեր էութենէն ներս: Ուստի մեր կենցաղով եւ մեր մտքի ուղղութեամբ բանանք այդ Հոսանքին ճամբան:

Այդ յայտնութիւնը ակներեւ կ'ըլլայ անձէն ցոլացած գեղեցկութեան որակէն, ինչ որ կախեալ է անձին ոնեցած սիրոյ մակարդակէն, յոյսի Հաստատակամութենէն, Հաւատքի զօրութենէն, ինչպէս նաեւ ծառայութեան եւ զոհողութեան մակարդակէն՝ այսինքն խորհուրդէն, խօսքէն ու գործքէն:

«Ողորմեա՛ ինձ Աստուած
ըստ մեծի ողորմութեան քում,
ըստ բազում գթութեան քում,
քաւեա՛ զանօրէնութիւնս իմ»:

Վահէ Սվաճեան

